



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄԼՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ 02(366) «05» մարտի 2019թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

	ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԿԻՐԸ	
21	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2004 թվականի ՆՀ-150 հրամանագրում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-18-Ն հրամանագիրը	
	ՎԵՑԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ	
22	«Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի հոկտեմբերի 13-ի ՆԿ-9-Ն կարգադրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆԿ-2-Ն կարգադրությունը	
	ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
23	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 53-Ն որոշումը	
24	««Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության 2019 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 62-Ն որոշումը	
25	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 81-Ն որոշումը	
26	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 82-Ն որոշումը	
27	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 83-Ն որոշումը	
28	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 84-Ն որոշումը	
29	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 85-Ն որոշումը.....	
30	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 93-Ն որոշումը	
31	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 99-Ն որոշումը	
32	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ	

	կառավարության N 100-Ն որոշումը	
33	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 101-Ն որոշումը	
34	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 102-Ն որոշումը	
35	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 103-Ն որոշումը	
36	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 104-Ն որոշումը	
37	«Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 1135-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 110-Ն որոշումը	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
38	ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ/1176/02/17թ. որոշումը	
39	ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ/0118/02/17 որոշումը	
40	ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ/3505/02/17 որոշումը	
41	ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ/2648/02/16 որոշումը	

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2004
ԹՎԱԿԱՆԻ ՆՀ-150 ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասը և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-103-Ն հրամանագիրը **ո ր ո շ ու մ եմ**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2004 թվականի դեկտեմբերի 17-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության դրոշի մասին» ՆՀ-150 հրամանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) հրամանագրի վերնագրում, 1-ին և 2-րդ կետերում, հրամանագրով հաստատված կանոնադրության և նկարագրության վերնագրերում ու տեքստերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով.

2) հրամանագրի նախաբանում, հրամանագրով հաստատված կանոնադրության և նկարագրության տեքստերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով.

3) հրամանագրով հաստատված նկարագրության տեքստում «ԼՂՀ» հապավումը փոխարինել «ԱՀ» հապավումով:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2019թ. փետրվարի 28
Ստեփանակերտ
ՆՀ-18-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
13-Ի ՆԿ-9-Ն ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Քաղաքացիական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասը՝ **ո թ ո շ ու մ եմ**.

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի հոկտեմբերի 13-ի «Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» ՆԿ-9-Ն կարգադրության մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) կարգադրության հավելվածը լրացնել հետևյալ քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով՝

«Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնի անձնագիր N 22.2».

«Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի արարողակարգի բաժնի առաջատար մասնագետի պաշտոնի անձնագիր N 47.4».

2) կարգադրության հավելվածից հանել հետևյալ քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը՝

«Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի արարողակարգի բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնի անձնագիր N 35».

«Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի քարտուղարության արձանագրային բաժնի առաջին կարգի մասնագետի պաշտոնի անձնագիր N 50»:

2. Մույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2019թ. փետրվարի 22
Ստեփանակերտ
ՆԿ-2-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 փետրվարի 2019թ.

N 53-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ Ստեփանակերտ քաղաքի Տ. Մեծ փողոցի թիվ 21ա/45 հասցեում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,0022 հեկտար արդյունաբերական օբյեկտների հողերը՝ համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Ստեփանակերտի քաղաքապետին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 փետրվարի 2019թ.

N 62-Ն

ք.Ստեփանակերտ

**«ԱՐՑԱԽԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ
ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 1135-Ն որոշման 15-րդ կետի 2-րդ ենթակետը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ր ք շ ու մ է:**

1. Հաստատել «Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության 2019 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելվածի:

2. Թույլատրել Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությանը՝ անհրաժեշտության դեպքում սույն որոշման 1-ին կետով հաստատված նախահաշվում կատարել վերաբաշխում ծախսերի տնտեսագիտական դասակարգմամբ նախատեսված հոդվածների միջև, համաձայնեցնելով Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

3. Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարին՝ մեկամսյա ժամկետում հաստատել սույն որոշման 1-ին կետով հաստատված նախահաշվով նախատեսված հատկացումների եռամսյակային բաշխումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2019 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ
«ԱՐՑԱՄԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ

(հազար դրամ)

Անվանումները	Հոդված	Տարի
Մուտքեր		
ՏԱՐԵՄԿՁԲԻ ԱԶՍՏ ՄՆԱՑՈՐԴԸ		44 317,0
ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	x	665 791,9
ԸՆԴԱՄԵՆԸ		
Ելքեր		
Ա. ԸՆԹԱՑԻՎ ԾԱԽՍԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ	x	598 481,5
1. ՊԵՏԱԿԱՆ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԵՆԹԱԿԱ ԲՅՈՒՋԵՏԱՑԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝ ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում՝	x	246 558,1
1.1 Աշխատանքի վարձատրություն	x	246 558,1
-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	411100	225 216,0
- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	411200	4 849,1
Այլ վարձատրություն	411500	16 493,0
2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ	x	324 560,5
2.1 Շարունակական ծախսեր		5 431,0
-Էներգետիկ ծառայություններ	421200	1 760,0
-Գոմունալ ծառայություններ	421300	80,0
-Կապի ծառայություններ	421400	1 030,0
-Ապահովագրական ծախսեր	421500	161,0
-Գույքի և սարքավորումների վարձակալություն	421600	2 400,0
2.2 Գործուղումների և շրջագայության ծախսեր	x	1 200,0
-Ներքին գործուղումներ	422100	1 200,0
2.3 Պայմանագրային այլ ծառայությունների ձեռք բերում	x	298 013,7
-Վարչական ծառայություններ	423100	90,0
-Համակարգչային ծառայություններ	423200	400,0
-Տեղեկատվական ծառայություններ	423400	2 200,0
-Ներկայացուցչական ծախսեր	423700	500,0
Ընդհանուր բնույթի այլ ծառայություն	423900	294 823,7
2.4 Այլ մասնագիտական ծառայությունների ձեռք բերում	x	6,0
-Մասնագիտական ծառայություններ	424100	6,0
2.5 Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)	x	2 960,0
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	425100	500,0
-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	425200	2 460,0
2.6 Նյութեր (սպրանքներ)	x	16 949,8
-Գրասենյակային նյութեր և հագուստ	426100	6 550,0
-Տրանսպորտային նյութեր	426400	9 589,8
Շրջակա միջավայրի պաշտպանության և գիտական նյութեր	426500	70,0
-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	426700	200,0

-Հատուկ նպատակային այլ նյութեր	426900	540,0
3. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	x	27 362,9
3.1 Հարկեր, պարտադիր վճարներ և տույժեր, որոնք կառավարման տարբեր մակարդակների կողմից կիրառվում են միմյանց նկատմամբ	x	320,9
-Այլ հարկեր	482200	302,9
-Պարտադիր վճարներ	482300	17,5
3.2 Այլ ծախսեր	x	27 042,5
-Այլ ծախսեր	486100	27 042,5
Բ. ՈՉ-ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	x	46 000,0
1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	x	46 000,0
Շենքերի և շինությունների կառուցում	5112	10 000,0
-Վարչական սարքավորումներ	512200	31 500,0
-Աճեցվող ակտիվներ	513100	4 500,0
ԸՆԴԱՄԵՆԸ	x	644 481,5
ՏԱՐԵՎԵՐՁԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ		65 627,4

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2019թ.

N 81-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 21-ի N 633 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վարդաձորի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 18,78 հեկտար արոտավայրը և պետական սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության 88,1 հեկտար թփուտը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ ընդերքի օգտագործման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2019թ.

N 82-Ն

ք.Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ք ա շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 168 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վանքի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության 0,13 հեկտար թփուտը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2019թ.

N 83-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 377 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Առաջաձորի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 2,4 հեկտար այլ հողատեսքերը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ արդյունաբերական օբյեկտների հողերի:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2019թ.

N 84-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ ղ ղ ղ** է:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 155 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Հաղրութի շրջանի Հաղրութի քաղաքային համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության 0,00465 հեկտար այլ հողերը փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2019թ.

N 85-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ր ք ղ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Աղավնոյի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 2,43007 հեկտար վարելահողը, համաձայն հավելվածի, փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ ընդերքի օգտագործման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2019թ.

N 93-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջադրում է**:

1. Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Որոտանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,53619 հեկտար և 0,23785 հեկտար արոտավայրերը՝ համաձայն հավելվածի, փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2019թ.

N 99-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ Ստեփանակերտ քաղաքի 37-րդ թաղամասում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,0465 հեկտար արդյունաբերական օբյեկտների հողերը՝ համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Ստեփանակերտի քաղաքապետին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2019թ.

N 100-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 21-ի N 631 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Մաղավուզի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,1 հեկտար վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2019թ.

N 101-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 27-ի N 350 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Ասկերանի քաղաքային համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 2,0 հեկտար այլ հողատեսքերը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ արդյունաբերական օբյեկտների հողերի:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2019թ.

N 102-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ր ք ղ յ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 14-ի N 463 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Շոշի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,15 հեկտար վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2019թ.

N 103-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ր ք շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 1-ի N 589 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Բերքաձորի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,371 հեկտար վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2019թ.

N 104-Ն

ք.Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ս ք ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Նոր Գետաշենի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,7701 հեկտար այլ հողատեսքերը՝ համաձայն հավելվածի, փոխադրել Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ Էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 մարտի 2019թ.

N 110-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵՆՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1135-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ղ ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքի N1 հավելվածի NN 1, 3.2, 3.3 և 3.5 աղյուսակներում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների և Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին» N1135-Ն որոշման N2 հավելվածի NN1, 3.2, 3.3 և 3.5 աղյուսակների ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1, 2, 3 և 4 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2019 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇՏՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N1135-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ. դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններա իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				I եռամսյակ	I կիսամյակ	Իննամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱՌՄԵՐ	-	-	-	-
			<i>այդ թվում՝</i>				
09			ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	-	-	-	-
	2		Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն	(900,0)	(1961,9)	(2988,8)	(4438,7)
		1	Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն	(900,0)	(1961,9)	(2988,8)	(4438,7)
		01	Պետական աջակցություն ԱՀ շրջանների պետական հանրակրթական ուսումնական հաստատություններին	3167,6	3167,6	3167,6	3167,6
			Ստեփանակերտի քաղաքապետարան	3167,6	3167,6	3167,6	3167,6
		03	Պետական աջակցություն ԱՀ շրջանների պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություններին	(4067,6)	(5129,5)	(6156,4)	(7606,3)
			Քաջաթաղի շրջանի վարչակազմ	(4067,6)	(5129,5)	(6156,4)	(7606,3)
	5		Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն	900,0	1961,9	2988,8	4438,7
		1	Արտադպրոցական դաստիարակություն	900,0	1961,9	2988,8	4438,7
		01	Պետական աջակցություն մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններին	900,0	1961,9	2988,8	4438,7
			Հաղբուլի շրջանի վարչակազմ	900,0	1961,9	2988,8	4438,7

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Հավելված N2
Արցախի Հանրապետության կառավարության
2019 թվականի մարտի 1-ի N 110-Ն որոշման

**«ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3.2 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1135-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3.2 ԱՂՅՈՒՄԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ. դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրերի և կատարողների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				I եռամսյակ	I կիսամյակ	Իննամիս	Տարի
09	2	1	Ստեփանակերտի քաղաքապետարան	3167,6	3167,6	3167,6	3167,6
			«Ստեփանակերտի Ավ. Իսահակյանի անվան N 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	3167,6	3167,6	3167,6	3167,6
			ԸՆԴԱՄԵՆԸ	3167,6	3167,6	3167,6	3167,6

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Հավելված N3
Արցախի Հանրապետության կառավարության
2019 թվականի մարտի 1-ի N 110-Ն որոշման

**«ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3.3 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N1135-Ն
ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3.3 ԱՂՅՈՒՄԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ. դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրերի և կատարողների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				I եռամսյակ	I կիսամյակ	Իննամիս	Տարի
09	2	1	Քաշաթաղի շրջանի վարչակազմ	(4067,6)	(5129,5)	(6156,4)	(7606,3)
			«Քաշաթաղի շրջանի հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություն» ՊՈԱԿ	(4067,6)	(5129,5)	(6156,4)	(7606,3)
			ԸՆԴԱՄԵՆԸ	(4067,6)	(5129,5)	(6156,4)	(7606,3)

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3.5 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇՏՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N1135-Ն
ՈՐՈՇՄԱՆ N2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3.5 ԱՂՅՈՒՍԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ. դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրերի և կատարողների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				I եռամ- սյակ	I կիսամ- յակ	Ինն ամիս	Տարի
09	5	1	Հաղրութի շրջանի վարչակազմ	900,0	1961,9	2988,8	4438,7
			«Հաղրութի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ	900,0	1961,9	2988,8	4438,7
			ԸՆԴԱՄԵՆԸ	900,0	1961,9	2988,8	4438,7

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում Քաղաքացիական գործ ԸԻԴ/1176/02/17թ.
Քաղաքացիական գործ ԸԻԴ/1176/02/17թ.
Նախագահող դատավոր՝ Հ.Գրիգորյան
Դատավորներ՝ Լ.Ավանեսյան
Մ.Ավանեսյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք. Ստեփանակերտ 31-ին հունվարի 2019թ.

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը (այսուհետ՝
Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով.
նախագահությամբ՝ Հ.Աբրահամյանի
մասնակցությամբ՝ դատավորներ Գ.Գրիգորյանի
Ա.Աբրահամյանի
Հ.Խաչատրյանի
Կ.Ղարայանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Կարո Կամոյի Միրզոյանի ընդդեմ Անահիտ Արտավազդի, Վարդան Սերգեյի, Տաթևիկ Վարդանի, Դավիթ Վարդանի, Թամար Վարդանի Թաղևոսյանների՝ բնակելի տնից վտարելու և գումար բռնագանձելու, և ըստ հայցի Անահիտ Արտավազդի Թաղևոսյանի ընդդեմ Կարո Կամոյի Միրզոյանի՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքները կիրառելու և գումար գանձելու մասին քաղաքացիական գործով ԱՀ վերաքննիչ դատարանի 2018թ. սեպտեմբերի 20-ի որոշման դեմ պատասխանող /հայցվոր/ Կարո Կամոյի Միրզոյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան /այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան/ հայցվոր /պատասխանող/ Ա.Թաղևոսյանը /այսուհետ՝ նաև Հայցվոր/պատասխանող// խնդրել է բռնագանձել Կ.Միրզոյանից /այսուհետ՝ նաև Պատասխանող/հայցվոր// 1.500.000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ, որից՝ 1.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամը որպես Ստեփանակերտ քաղաքի Մ.Սպարապետ փողոցի թիվ 84 /նախկին 60/ հասցեում գտնվող բնակելի տան /այսուհետ՝ նաև Բնակելի տուն/ վերաբերյալ կնքված առուվաճառքի առոչինչ գործարքի անվավերության հետևանք, իսկ 500.000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամը որպես վերը նշված գույքի բարելավման համար կատարված ծախսի գումար:

Պատասխանողը/հայցվորը/ 2017թ. մայիսի 3-ին հայց է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ պահանջելով Բնակելի տնից վտարել Անահիտ Արտավազդի, Վարդան Սերգեյի, Տաթևիկ Վարդանի, Դավիթ Վարդանի, Թամար Վարդանի Թաղևոսյաններին: Հայցային դիմումն ընդունվել է վարույթ և գործին շնորհվել է ԸԻԴ/1323/02/17 հերթական համարը: Պատասխանողն/հայցվորն/ Առաջին ատյանի դատարան ներկայացրել է դիմում՝ հայցային պահանջների ծավալը փոփոխելու մասին՝ խնդրելով Ա.Թաղևոսյանից բռնագանձել 1.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ որպես անհիմն հարստացման գումար:

Առաջին ատյանի դատարանի 2017թ. հունիսի 27-ի որոշմամբ ԸԻԴ/1323/02/17 քաղաքացիական գործը միացվել է սույն՝ ԸԻԴ/1176/02/17 քաղաքացիական գործին՝ մեկ վարույթում քննելու համար և գործին շնորհվել է ԸԻԴ/1176/02/17 համարը:

Առաջին ատյանի դատարանը 2018թ. հունիսի 22-ի վճռով Ա.Թադևոսյանի հայցը բավարարել է. վճռել է Կ.Միրզոյանից հոգուտ Ա.Թադևոսյանի բռնագանձել 1.500.000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ, որից՝ 1.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ որպես առջինը գործարքի անվավերության հետևանք, իսկ 500.000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամը որպես անհիմն հարստացման գումար: Կ.Միրզոյանի հայցը բավարարվել է մասնակիորեն՝ բնակելի տնից վտարելու պահանջի մասով, իսկ 1.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասով՝ մերժվել:

Նշված վճռի դեմ Կ.Միրզոյանի ներկայացուցիչ Գ.Հարությունյանը բերել է վերաքննիչ բողոք:

Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանը /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ 2018թ. սեպտեմբերի 20-ի որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը, Առաջին ատյանի դատարանի 2018թ. հունիսի 22-ի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Կ.Միրզոյանը, խնդրելով բեկանել Վերաքննիչ դատարանի 2018թ. սեպտեմբերի 20-ի որոշումը, գործն ուղարկելով Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

ԱՀ Գերագույն դատարանը 2018թ. հոկտեմբերի 22-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է՝ պետական տուրքի գումարը թերի վճարելու հիմնավորմամբ, սահմանելով ժամկետ՝ սխալը շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար:

2018թ. դեկտեմբերի 24-ին Կ.Միրզոյանը կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք, որն ընդունվել է Գերագույն դատարանի վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոք բերողի՝ Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է նյութական և դատավարական նորմերի խախտմամբ: Բողոք բերողը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է իրավահարաբերության ծագման պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածը, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ, 49-րդ, 219-րդ հոդվածների պահանջները:

Նշված պնդումը բողոքաբերը հիմնավորում է հետևյալ պատճառաբանությամբ.

Շարադրելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի պահանջները, բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանն ընդհանրապես չի անդրադարձել և քննարկման առարկա չի դարձրել Առաջին ատյանի դատարանի կողմից Ա.Թադևոսյանից հոգուտ Կ.Միրզոյանի 1.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամը որպես անհիմն հարստացման գումարի բռնագանձումը մերժելու դեմ վերաքննիչ բողոքում մատնանշված հիմքերն և հիմնավորումները, որի արդյունքում հանգել է սխալ հետևության և անհիմն մերժել վերաքննիչ բողոքը:

Վկայակոչելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածը, բողոքի հեղինակը նշում է, որ վիճելի տունը Ս.Հայրապետյանի միջոցով՝ ամիսը 30.000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ վարձավճարի դիմաց, տրամադրել է Ա.Թադևոսյանի ընտանիքին: 2015թ. հունիս ամսին բողոքաբերն ու

Ա.Թադևոսյանը ձեռք են բերել փոխադարձ համաձայնություն տան առուվաճառքի մասին, պայմանավորվելով գնի վերաբերյալ: Ըստ բողոքաբերի՝ պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ Ա.Թադևոսյանը տան համար պետք է վճարի 5.500.000 /հինգ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ, որից 1.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամն Ա.Թադևոսյանը վճարել է անմիջապես, իսկ մնացածը պետք է վճարեր մեկ տարվա ընթացքում, սակայն նա այլևս գումար չի վճարել: Բողոքաբերը պնդում է, որ ստորագրած դատարանները պատշաճ և բազմակողմանի քննության առարկա չեն դարձրել գործում առկա բոլոր ապացույցները և չեն կատարել փոխադարձ հաշվարկներ, հաշվի առնելով նաև բողոքաբերի հայցապահանջը գումար բռնագանձելու վերաբերյալ:

Ըստ բողոքաբերի՝ Ա.Թադևոսյանը բնակվում էր վիճելի տանը, վարձավճար չվճարելով, ինչը հանդիսանում է անհիմն հարստացում և 2018թ. հոկտեմբերի 2-ի դրությամբ անհիմն հարստացման գումարը կազմել է 1.170.000 /մեկ միլիոն հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ, որից ինքը պահանջում է միայն 1.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամը: Մինչդեռ, ըստ բողոք բերողի՝ Առաջին ատյանի դատարանն անտեսել է վկայակոչած այդ փաստերը, իսկ Վերաքննիչ դատարանը բողոքի այդ հիմքն ընդհանրապես քննարկման առարկա չի դարձրել:

Բողոք բերող անձը նաև շեշտել է, որ 2015թ. դրությամբ Բնակելի տան վերանորոգման աշխատանքները կազմել են 440.100 /չորս հարյուր քառասուն հազար հարյուր/ ՀՀ դրամ, սակայն 2018թ. ապրիլի 9-ի ՀՆ՝ 23013/17 փորձագետի եզրակացությամբ նշված չէ, թե որքան են կազմում վերանորոգումների ֆիզիկական մաշվածությունը փորձաքննության կատարման պահին: Բողոքաբերը ճիշտ չի համարում նաև Առաջին ատյանի դատարանի վճռով հոգուտ Ա.Թադևոսյանի 500.000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամը որպես անհիմն հարստացման գումար բռնագանձելը և գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշմամբ այդ եզրահանգումը օրինական և հիմնավորված համարելն անհիմն է:

Բողոք բերող անձը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի 2018թ. հունիսի 22-ի վճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2018թ. սեպտեմբերի 20-ի որոշումը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 5-6 մատյանի 115609 համարի տակ Ստեփանակերտ քաղաքի Մ.Սպարապետ փողոցի թիվ 60 հասցեում գտնվող բնակելի տան նկատմամբ գրանցված է Կ.Միրզոյանի սեփականության իրավունքը, ինչը հաստատվում է 2012թ. մայիսի 21-ի թիվ 120110 գրանցման վկայականով:

2. Ըստ գործի նյութերի՝ 2015թ. հուլիսի 2-ին Կ.Միրզոյանը և Ա.Թադևոսյանը ձեռք են բերել փոխադարձ համաձայնություն բնակելի տան առուվաճառքի վերաբերյալ: Ա.Թադևոսյանը 2015թ. հուլիսի 2-ին 1.000.000 /մեկ միլիոն դրամ/ ՀՀ դրամը վճարել է Կ.Միրզոյանին, իսկ 4.500.000 /չորս միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամը խոստացել է վճարել մեկ տարվա ընթացքում:

3. Կողմերի միջև բնակելի տան առուվաճառքի վերաբերյալ օրենքի պահանջներին համապատասխան պայմանագիր չի կնքվել:

4. Ըստ 2018թ. ապրիլի 9-ի ՀՆ՝ 23013/17 փորձագետի եզրակացության՝ փորձաքննության տրամադրված Ստեփանակերտ քաղաքի Մ.Սպարապետ 84 հասցեում գտնվող բնակելի տանը կատարված վերանորոգման աշխատանքների արժեքը 2015թ. դրությամբ կազմել է 586.800 /հինգ հարյուր

ութսունվեց հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ: Նույն եզրակացության համաձայն՝ բնակելի տան շուկայական արժեքը 2018թ. դրությամբ և առկա ապրանքային վիճակով, գնահատվում է 6.195.000 /վեց միլիոն հարյուր իննսունհինգ հազար/ ՀՀ դրամ:

5. Ա.Թադևոսյանին վիճելի տունը տրամադրվել է վարձակալական հիմունքներով՝ ամիսը 30.000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ վարձավճարի դիմաց: Գործի նյութերից հետևում է, որ 2015թ. հուլիսից Ա.Թադևոսյանը հրաժարվում է վարձավճարը վճարելուց:

4.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Գերագույն դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը և բողոքարկված դատական ակտը վճռաբեկության կարգով վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից:

Գերագույն դատարանը, վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով Վերաքննիչ դատարանի որոշումը, գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն՝ գումարներ բռնագանձելու մասով, բեկանել և գործն այդ ծավալով ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության, հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ վճռաբեկության կարգով գործի քննության ժամանակ Գերագույն դատարանը գործով կայացված դատական ակտը վերանայում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի...: Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Ընդ որում, գործին մասնակցող յուրաքանչյուր անձ իր կողմից վկայակոչված փաստերը հիմնավորելու համար պարտավոր է ներկայացնել այդ փաստերը հիմնավորող ապացույցներ:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, ԼՂՀ միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Անդրադառնալով վճռաբեկ բողոքի՝ Վերաքննիչ դատարանի որոշման չպատճառաբանված լինելու մասին փաստարկին՝ Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ վերաքննիչ բողոք ներկայացնելիս յուրաքանչյուր բողոքաբեր ակնկալում է, որ կստանա իր առաջադրած իրավական հարցերի պատասխանները:

Սույն գործով վճռաբեկ բողոք բերած անձը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարել և օրինական ուժի մեջ թողել Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, առանց վերաքննիչ բողոքում նշված՝ Ա.Թադևոսյանից Կ.Միրզոյանի օգտին 1.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամը, որպես

անհիմն հարստացման գումար գանձելու վերաբերյալ բողոքի փաստարկը պատշաճ քննարկման և գնահատման առարկա դարձնելու, այսինքն չի պատճառաբանել վերաքննիչ բողոքի տվյալ փաստարկը՝ նյութական և դատավարական օրենքի խախտման համատեքստում:

Գերագույն դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որի համաձայն՝ «...Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն գործով բացակայում են վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքերը, Դատարանը կայացրել է ըստ էության ճիշտ դատական ակտ, հետևաբար պետք է կիրառել Օրենքի 231-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ բողոքները մերժելու և դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու վերաքննիչ դատարանի լիազորությունը...», չի կարող համարվել պատշաճ պարզաբանված և հիմնավոր դիրքորոշում:

Գերագույն դատարանն իր որոշումներում արդեն իսկ անդրադարձել է Վերաքննիչ դատարանի որոշումների պատճառաբանված լինելու անհրաժեշտությանը:

Մասնավորապես՝ ԸԻԴ 1510/02/15 գործով Գերագույն դատարանի 2016թ. օգոստոսի 5-ի որոշումը /տես՝ քաղաքացիական գործն ըստ հայցի Արամայիս Հայկի Մարգարյանի ընդդեմ Կարեն Կամոյի Մարգարյանի, ԼՂՀ կառավարության աշխատակազմի, ԼՂՀ արդարադատության նախարարության Ստեփանակերտ նոտարական տարածքի թիվ 1 նոտարական գրասենյակի պետնոտարի՝ ըստ օրենքի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրն ու դրա հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին/, ԸԻԴ N 2525/02/2015 գործով Գերագույն դատարանի 2016թ. ապրիլի 19-ի որոշումը /տես՝ ըստ հայցի Արմեն Շավարշի Հարությունյանի ընդդեմ Հովիկ Ղարիբի Բաղասյանի և Սամվել Շավարշի Հարությունյանի՝ բաժնային սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Ստեփանակերտ քաղաքի Վ.Սարոյան փողոցի թիվ 4 շենքի թիվ 21 բնակարանում բնակվելուն ուղղված խոչընդոտները վերացնելուն պարտավորեցնելու և գույքի տիրապետման ու օգտագործման կարգ սահմանելու պահանջների մասին/:

Գերագույն դատարանը հարկ է համարում կրկին անդրադառնալ նշված իրավական հարցին, վերահաստատելով և զարգացնելով նախկինում արտահայտած դիրքորոշումը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230.1-ին հոդվածը սահմանում է, որ Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքներով վերաքննիչ դատարանը կայացնում է որոշում, որը պետք է բավարարի նույն օրենսգրքի 121.1-ին հոդվածով սահմանված պահանջները: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանի որոշումը պետք է լինի օրինական, հիմնավորված և պատճառաբանված: Իսկ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121.1-ին հոդվածի համաձայն՝ 1. Առաջին ատյանի դատարանի վճիռն օրինական է, եթե այն կայացվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության, սույն օրենսգրքի, այլ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառելի են տվյալ գործը քննելիս: 2. Առաջին ատյանի դատարանի վճիռը հիմնավորված է, եթե վճռում շարադրված եզրահանգումները և հաստատված փաստերը համապատասխանում են Առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցներին: 3. Առաջին ատյանի դատարանի վճիռը պատճառաբանված է, եթե դրանում երևում են փաստերի հաստատման, ապացույցների գնահատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները:

Նշված իրավակարգավորումը դիտարկելով սահմանադրական և կոնվենցիոն նորմերով ամրագրված արդար դատաքննության իրավունքի համատեքստում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ դատարանների վրա դատական ակտերը հիմնավորելու պահանջ դնելը նպատակ է հետապնդում նպաստել հասարակության կողմից դատական համակարգի և դատարանի նկատմամբ վստահության մեծացմանը և կոչված է ապահովել դատական պաշտպանության իրավունքի իրականացումը՝ դատական ակտերի բողոքարկման հնարավորությունը: Նման պարագայում կարելի է նշել, որ դատական ակտի հիմնավորումը անհրաժեշտ է դատական ակտի բողոքարկման իրավունքի արդյունավետ իրականացման նպատակով, և դատարանները պետք է խստիվ պահպանեն դատական ակտերի պատճառաբանվածությանը ներկայացվող օրենսդրական պահանջները, ուստի այդ հիմքով վճռաբեկ բողոքների փաստարկները հիմնավոր են:

Մասնավորապես, Գերագույն դատարանը շեշտում է, որ դատաքննության արդյունքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի /նորմերի/, որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Միաժամանակ, Գերագույն դատարանն արձանագրում է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին:

Մինչդեռ, սույն գործի փաստերը վերլուծելով՝ Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը չի իրականացրել վերաքննիչ բողոքի պատշաճ դատական քննություն, քանի որ բողոքում նշված ոչ բոլոր հիմքերն են դարձվել պատշաճ քննարկման և իրավական գնահատման առարկա, հետևաբար Վերաքննիչ դատարանի եզրահանգումներն Առաջին ատյանի դատարանի վճռի հիմնավորվածության մասին չեն կարող դիտարկվել որպես հիմնավորված և պատճառաբանված:

Այսպես՝ սույն գործի նյութերից հետևում է. անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 5-6 մատյանի 115609 համարի տակ Ստեփանակերտ քաղաքի Մ.Սպարապետ փողոցի թիվ 60 հասցեում գտնվող բնակելի տան նկատմամբ գրանցված է Կ.Միրզոյանի սեփականության իրավունքը, ինչը հաստատվում է 2012թ. մայիսի 21-ի թիվ 120110 գրանցման վկայականով: Ըստ գործի նյութերի՝ 2015թ. հուլիսի 2-ին Կ.Միրզոյանը և Ա.Թադևոսյանը ձեռք են բերել փոխադարձ համաձայնություն բնակելի տան առուվաճառքի վերաբերյալ և Ա.Թադևոսյանը 2015թ. հուլիսի 2-ին 1.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամը վճարել է Կ.Միրզոյանին, իսկ 4.500.000 /չորս միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամը խոստացել է վճարել մեկ տարվա ընթացքում, ինչը, սակայն չի կատարել: Կողմերը օրենքով սահմանված կարգով գործարք չեն կնքել:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ Ա.Թադևոսյանի և Կ.Միրզոյանի միջև կնքված գործարքն անվավեր է, և որ անհրաժեշտ է կիրառել անվավերության հետևանքները՝ կողմերի նախկին դրությունը վերականգնելու և միմյանց այդ գործարքով ամբողջ ստացածը վերադարձնելու վերաբերյալ հիմնավոր է:

Գերագույն դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը ճիշտ դիրքորոշում է հայտնել, հիմնավոր համարելով Առաջին ատյանի դատարանի՝ Կ.Միրզոյանի կողմից Ա. Թադևոսյանին առջինը գործարքով ստացած 1.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ գումարը վերադարձնելու մասին եզրահանգումը: Գերագույն դատարանը հիմնավոր է համարում նաև Վերաքննիչ դատարանի եզրահանգումը փորձաքննության արդյունքում ամրագրված շինարարական աշխատանքների արժեքը բռնագանձելու մասին:

Մինչդեռ, Գերագույն դատարանը հարկ է համարում շեշտել, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, քննարկման և պատշաճ իրավական գնահատման առարկա չի դարձրել վերաքննիչ բողոքի այն փաստարկները, որ Ա. Թադևոսյանը բնակվել է վիճելի տանն առանց վարձավճար վճարելու, որ իրենից պետք է բռնագանձվի 1.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ, որպես անհիմն հարստացման գումար, կամ կատարվեն փոխադարձ հաշվարկներ: Նման պարագայում Վերաքննիչ դատարանի որոշումը՝ գումարների բռնագանձման մասով հիմնավոր և պատճառաբանված չի կարող համարվել:

Հաշվի առնելով, որ սույն գործով առկա է բռնագանձման ենթակա գումարների չափի մասով նոր քննության անհրաժեշտություն, Գերագույն դատարանը պնդում է, որ նոր քննության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել դատական ակտի պատճառաբանված լինելու անհրաժեշտության վերաբերյալ սույն որոշմամբ արտահայտած դիրքորոշումները, այսինքն քննարկման և պատշաճ իրավական գնահատման առարկա դարձնելով նաև վերաքննիչ բողոքում մատնանշված և քննարկման առարկա չդարձված փաստարկները՝ բռնագանձման ենթակա գումարների չափի մասով, անհրաժեշտության դեպքում անդրադառնալով նաև բռնագանձված 1.500.000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի չափին:

Համաձայն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Գերագույն դատարանը՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ:

Այսպիսով, Գերագույն դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանի հետևությունները հիմնված չեն գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման և գնահատման վրա, իսկ վճռաբեկ բողոքում բերված փաստարկները գործի ըստ էության ճիշտ լուծման համար ունեն էական նշանակություն, ուստի ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով սահմանված լիազորության ուժով՝ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն, իսկ վերանայվող դատական ակտը բեկանել՝ գործն ուղարկելով Վերաքննիչ դատարան՝ սույն որոշմամբ նշված ծավալով, այն է՝ բռնագանձման ենթակա գումարների չափի հստակեցման մասով, նոր քննության:

5. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և

փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով վեճը վերջնական լուծում չի ստացել, Գերագույն դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցին անհրաժեշտ է անդրադառնալ գործի նոր քննության արդյունքներով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2018 թվականի սեպտեմբերի 20-ի որոշումը մասնակիորեն՝ գումարներ բռնագանձելու պահանջների մասով, բեկանել և գործը՝ այդ ծավալով ուղարկել Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

Որոշումը մնացած մասով թողնել անփոփոխ:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ նոր քննության արդյունքներով:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

ստորագրություն

Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ստորագրություն

Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ստորագրություն

Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ստորագրություն

Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

ստորագրություն

Կ.ՂԱՐԱՅԱՆ

2018թ. մարտի 13-ի դատական նիստում, ավարտելով գործի դատաքննությունը, դատարանը հայտարարել է վճռի հրապարակման վայրն ու ժամանակը:

Առաջին ատյանի դատարանի 2018թ. մարտի 23-ի որոշմամբ գործի քննությունը վերսկսվել է և գործը նշանակվել դատաքննության:

Առաջին ատյանի դատարանի /դատավոր Դ.Ավանեսյան/ 2018թ. հուլիսի 13-ի վճռով հայցը մերժվել է:

2018թ. օգոստոսի 15-ին հայցվոր Ս.Գյուրջյանը հիշյալ վճռի դեմ բերել է վերաքննիչ բողոք, որն ԱՀ վերաքննիչ դատարանի /այսուհետ՝ Վերաքննիչ դատարան/ 2018թ. օգոստոսի 21-ի որոշմամբ վերադարձվել է՝ առանց համապատասխան միջնորդության օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացված լինելու պատճառաբանությամբ:

2018թ. սեպտեմբերի 6-ին Ս.Գյուրջյանն Առաջին ատյանի դատարանի 2018թ. հուլիսի 13-ի վճռի դեմ կրկին ներկայացրել է վերաքննիչ բողոք: Բողոքաբերը, միաժամանակ, միջնորդել է հարգելի ճանաչել վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը և նշված ժամկետը վերականգնել՝ պատճառաբանելով իր միջնորդությունը բողոքարկվող դատական ակտն ուշ ստանալու հանգամանքով:

Վերաքննիչ դատարանի 2018թ. սեպտեմբերի 11-ի որոշմամբ բողոքաբերի միջնորդությունը՝ բողոք բերելու համար բաց թողնված ժամկետը հարգելի համարելու մասին, բավարարվել է և վերաքննիչ բողոքն ընդունվել վարույթ:

Վերաքննիչ դատարանի 2018թ. հոկտեմբերի 5-ի որոշմամբ Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2018թ. հուլիսի 13-ի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը բավարարվել: «Ջրային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերությունից /պետական գրանցման համար 44312020550, ՀՎՀՀ 90006038/ հոգուտ Սանասար Ալեքսեյի Գյուրջյանի բռնագանձվել է 1.886.500 / մեկ միլիոն ութ հարյուր ութսունվեց հազար հինգ հարյուր / ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի հատուցում:

«Ջրային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերությունից հոգուտ Սանասար Ալեքսեյի Գյուրջյանի բռնագանձվել է 94.475 /իննսունչորս հազար չորս հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամ՝ որպես վճարված պետական տուրքի հատուցում:

«Ջրային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերությունից հոգուտ ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպության բռնագանձվել է 47.040 /քառասունյոթ հազար քառասուն/ ՀՀ դրամ՝ որպես կատարված փորձաքննության արժեքի հատուցում:

Վերաքննիչ դատարանի վերը նշված որոշման դեմ 2018թ. նոյեմբերի 2-ին «Ջրային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերությունը վճռաբեկ բողոք է ներկայացրել Գերագույն դատարան:

Գերագույն դատարանի 2018թ. նոյեմբերի 22-ի որոշմամբ պատասխանող «Ջրային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերության վճռաբեկ բողոքը վերադարձվել է, սահմանվել 20-օրյա ժամկետ որոշումը ստանալու պահից՝ ձևական սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար:

2018թ. դեկտեմբերի 5-ին պատասխանող «Ջրային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Վ.Ն.Դանիելյանը կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Գերագույն դատարանի 2018թ. դեկտեմբերի 14-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ, 49-րդ հոդվածների պահանջները և կողմերի միջև ճիշտ չի բաշխել ապացուցման բեռը ու ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել և սխալ կիրառել հայցվորի և պատասխանողի միջև 2014թ. մայիսի 8-ին կնքված թիվ 86 պայմանագրի /այսուհետ նաև՝ Պայմանագիր/ 12-րդ կետի պահանջները, սխալ է մեկնաբանել և չի կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջները ու չպետք է կիրառեր ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի պահանջները, սխալ է մեկնաբանել և սխալ է կիրառել ԼՂՀ կառավարության 2009թ. մայիսի 21-ի N 331-Ն որոշումը և սխալմամբ համարել, որ 2013թ. հունվարի 1-ից մինչև 2016թ. հունվարի 1-ը ԼՂՀ-ում գոյություն չունեն որևէ իրավական ակտ, որով հաստատված լինեին հողային կադաստրով նախատեսված գյուղատնտեսական հողատարածքների գուտ եկամուտները:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի պահանջները՝ դուրս գալով վերաքննիչ բողոքի սահմաններից, ինչպես նաև խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 217-րդ հոդվածի պահանջները, և առանց հարգելի պատճառի առկայության օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո ներկայացված վերաքննիչ բողոքն ընդունել է վարույթ:

Բողոք բերած անձը նշված պնդումները պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Բողոքաբերի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը ոչ բազմակողմանի, ոչ լրիվ և ոչ օբյեկտիվ հետազոտությամբ է գնահատել որպես ապացույց ներկայացված ԸԲԴ 2050/02/2016թ. քաղաքացիական գործով դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը և հանգել սխալ եզրակացության:

Մասնավորապես՝ այդ վճռով հաստատված է, որ հայցվոր Սանասար Գյուրջյանը չի կատարել Պայմանագրի 10-րդ կետի «դ» ենթակետի պահանջը, այսինքն՝ սահմանված տասնօրյա ժամկետում չի վճարել նախորդ ամսվա ընթացքում մատակարարված ոռոգման ջրի վարձը: Որպես ապացույց դատարանին ներկայացված այդ վճռով հաստատված է նաև, որ 2014թ. մայիսի 8-ի թիվ 86 պայմանագրի 10-րդ կետի «դ» ենթակետի պահանջը Սանասար Գյուրջյանը չի կատարել առնվազն մինչև 2016թ. դեկտեմբերը: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը սխալմամբ արձանագրել է, որ «Ջրային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերությունը որևէ ապացույց չի ներկայացրել Պայմանագրի 10-րդ կետի «դ» ենթակետի պահանջը Հայցվորի կողմից չապահովելու մասին:

Բացի դրանից, եթե անգամ համարվի, որ մատակարարի փոխհատուցման պարտականությունը ծագել է, ապա փոխհատուցման չափը ևս պետք է որոշվի Պայմանագրի 12-րդ կետին համապատասխան, ըստ որի՝ մատակարարը փոխհատուցում է բաժանորդի կրած վնասը՝ հայտով նախատեսված ջրի ծավալի 50 տոկոսից պակաս ջուր մատակարարելու հետևանքով առաջացած վնասի չափով, որը հաշվարկվում է մեկ հեկտարի հաշվով՝ հողային կադաստրով նախատեսված գյուղատնտեսական հողատեսքերի գուտ եկամտի և կատարված հաշվարկային ծախսի չափով, հանած պահպանված բերքի արժեքը: Տվյալ դեպքում 9 հա եզրպտացորենի մասով, հայտով նախատեսված ջրի ծավալի 86 տոկոսից ավելի ջուր է

մատակարարվել, հետևաբար այդ մասով վնասը կապված չէ ոռոգման ջրի պակասի հետ:

Ըստ բողոքի՝ Առաջին աստիճանի դատարանը սույն գործով կայացրած վճռով իրավացիորեն համարել է, որ հայտով նախատեսված ջրի ծավալի 86 տոկոսից ավելի ջրամատակարարման պայմաններում 9 հա եզիպտացորենի մասով մատակարարի փոխհատուցման պարտականությունը չի ծագել և նշված վճռի նշված եզրահանգումը չի բողոքարկվել:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել Առաջին աստիճանի դատարանի վճռի բովանդակությունը և սխալմամբ համարել, որ հայցը մերժելու հիմքը «գուտ եկամուտ» եզրույթի չբացահայտված լինելն է: Իրականում հայցը մերժվել է, քանի որ Հայցվորը Պայմանագրով նախատեսված ձևով վնասի հաշվարկ չի ներկայացրել դատարան: Ինչ մնում է «գուտ եկամուտ» եզրույթին, ապա այն սահմանված և բացահայտված է իրավական ակտերով:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն փաստը, որ Հայցվորի բերքի մի մասը պահպանվել է, որի մասին իր ցուցմունքում նշել է Սանասար Գյուրջյանը: Դատաքննության ժամանակ Սանասար Գյուրջյանի տված ցուցմունքի համաձայն մեկ հեկտար բանջարաբոստանային կուլտուրաների պահպանված բերքի արժեքը կազմել է 80 /ութսուն/ հազար ՀՀ դրամ, իսկ 9 հա եզիպտացորենի պահպանված բերքի արժեքը կազմել է 300 /երեք հարյուր/ հազար ՀՀ դրամ:

Բողոքաբերի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը քննարկման առարկա պետք է դարձներ մեկ հեկտար բանջարաբոստանային կուլտուրաների թերի ջրամատակարարման հետևանքով առաջացած վնասի հաշվարկման ձևը և չափը, քանի որ Հայցվորը բողոքել է հենց հաշվարկի և հաշվարկի ձևի մասին Առաջին աստիճանի դատարանի եզրահանգման դեմ: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից և բողոքի քննությունը կատարել ոչ թե մեկ, այլ տասը հեկտար գարնանացան կուլտուրաների կտրվածքով:

Մեջբերելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի բովանդակությունը, բողոքաբերը եզրակացրել է, որ նշված հոդվածից բխում է, որ եթե պայմանագրով նախատեսված է վնասների հատուցման ավելի պակաս չափ, ապա վնասը հաշվարկվում է հենց այդ չափով, իսկ տվյալ դեպքում կողմերի միջև իրավահարաբերությունները ծագել են նրանց միջև կնքված Պայմանագրով, և այդ Պայմանագրի 12-րդ կետով սահմանված է վնասի հաշվարկման կարգն ու պակաս չափը: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը վնասի հաշվարկման կարգն ու չափը Պայմանագրով նախատեսված պայմաններով կատարելու փոխարեն կատարել է օրենքով նախատեսված պայմաններով, ինչն էլ հանգեցրել է դատական սխալի:

Բացի այդ, Առաջին աստիճանի դատարանը, խախտելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի պահանջները և աղավաղելով ապացուցման պարտականության բաշխման օրենսդրական սկզբունքը, Հայցվորին ազատել է իր վկայակոչած փաստի ապացուցման պարտականությունից և պարզ չէ, թե ում վրա է դրել այդ պարտականությունը, ինչն անտեսվել է նաև Վերաքննիչ դատարանի կողմից, և արդյունքում կայացվել է անհիմն դատական ակտ:

Մեջբերելով «շողի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 2-րդ և 4-րդ հոդվածների բովանդակությունը, բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է իր դիրքորոշումը պատճառաբանել նաև նրանով, որ, իբր, իրավահարաբերության ծագման պահին ԼՂՀ-ում գոյություն չունեին որևէ իրավական ակտ, որով հաստատված լինեին հողային կադաստրով նախատեսված գյուղատնտեսական հողատարածքների գուտ եկամուտները: Բողոքաբերի կարծիքով՝ իրականում «գուտ եկամուտ» եզրույթը բացահայտող իրավական ակտը ԼՂՀ

կառավարության 2005թ. օգոստոսի 23-ի N 359 որոշումն է, որը գործել է սույն գործով իրավահարաբերության ծագման պահին /2014 թվականին/: Այդպիսով, Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել և սխալ է կիրառել ԼՂՀ կառավարության 2009թ. մայիսի 21-ի N 331-Ն որոշումը: Իրականում, հենց այդ որոշման 4-րդ կետով երկարաձգվել է ԼՂՀ կառավարության 2005թ. օգոստոսի 23-ի N 359 որոշմամբ հաստատված հողային կադաստրով նախատեսված գյուղատնտեսական հողատարածքների գուտ եկամուտների արժեքների գործողության ժամկետը՝ մինչև 2016թ. հունվարի 1-ը:

Բողոքաբերի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանն առանց որևէ ապացույցի առկայության հիմք է ընդունել հայցադիմումի մեջ նշված ծախսերի ցանկում ընդգրկված հետևյալ ծախսերը՝ մայր առու -20.000 ՀՀ դրամ, ակոսների պատրաստում -10.000 ՀՀ դրամ, արևածաղկի սերմացու -96.000 ՀՀ դրամ, սածիլներ -375.000 ՀՀ դրամ, չոր լոբու սերմացու -10.000 ՀՀ դրամ, դեղորայք -27.000 ՀՀ դրամ, բանվորի աշխատավարձ -240.000 ՀՀ դրամ, չնախատեսված ծախսեր -250.000 ՀՀ դրամ:

Վերաքննիչ դատարանի կողմից ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 217-րդ հոդվածի պահանջների խախտման մասին իր փաստարկը բողոքաբերը հիմնավորել է նրանով, որ վերաքննիչ բողոքը բերվել է օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո և Հայցվորի կողմից ժամկետը բաց թողնելու որևէ հարգելի պատճառ դատարան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը բողոքաբերը հիմնավորել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ /առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա/ և 1-ին /բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար/ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի, Պայմանագրի 12-րդ կետի, ինչպես նաև ԼՂՀ կառավարության 2009թ. մայիսի 21-ի N 331-Ն որոշման կիրառման մասով առկա է իրավունքի զարգացման խնդիր, կապված «պայմանագիր և օրենք» փոխհարաբերությունների, ինչպես նաև իրավական ակտերի գործողության ժամկետները սկսվելու և ավարտվելու հետ:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է ամբողջությամբ բեկանել ԱՀ վերաքննիչ դատարանի 2018թ. հոկտեմբերի 5-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Ընկերության և Հայցվորի միջև 2014թ. մայիսի 8-ին կնքվել է ոռոգման ջրի մատակարարման թիվ 86 պայմանագիրը, ըստ որի՝ Ընկերությունը պարտավորվել է Հայցվորին մատակարարել պահանջված քանակի ոռոգման ջուր, իսկ վերջինս պարտավորվել է ընդունել մատակարարված ոռոգման ջուրը և վճարել դրա վարձը: Պայմանագրի 3-րդ կետի համաձայն՝ կողմերի միջև փոխհարաբերությունները կարգավորվում են կանոններով և պայմանագրով, իսկ Պայմանագրի «Կողմերի պատասխանատվությունը» բաժնի 12-րդ կետի համաձայն՝ մատակարարը, բացառությամբ կանոնների 30-րդ կետում նշված դեպքերի, իր մեղքով բաժանորդին թերմատակարարված ջրաքանակը 3 օրվա ժամկետում չապահովելու դեպքում, եթե բաժանորդը ապահովել է 10-րդ կետի «դ» ենթակետում նախատեսված պահանջը, փոխհատուցում է բաժանորդի կրած վնասը՝ հայտով նախատեսված ջրի ծավալը 50 տոկոսից պակաս ջուր մատակարարելու հետևանքով առաջացած

վնասի չափով, որը հաշվարկվում է մեկ հեկտարի հաշվով՝ հողային կադաստրով նախատեսված գյուղատնտեսական հողատարածքների զուտ եկամտի և կատարված հաշվարկային ծախսի չափով, հանած պահպանված բերքի արժեքը /հատոր 1-ին, գ.թ.28/:

2. 2014թ. մայիսի 10-19-ն ընկած ժամանակահատվածում Հայցվորին մատակարարվել է ընդհանուր 18,6 հազար խոր. մետր ռոտզման ջուր 9 հա եզիպտացորենի դաշտը ռոտզելու համար, իսկ 1 հա բանջարային կուլտուրաների ռոտզման համար ռոտզման ջուր է մատակարարվել միայն 2014թ. մայիսի 10-ին, այն էլ՝ 12 լիտր վայրկյան ծավալով, մոտ 0,9 հազար խոր. մետր /հատոր 1-ին, գ.թ. 35, 34/:

3. Նոր Հայկաջուր համայնքի վարչական տարածքի գյուղատնտես Մլավիկ Միքայելի Գրիգորյանի, համայնքի ղեկավար Ռոբիկ Գուրգենի Դանիելյանի և վարձակալ Մանասար Գյուրջյանի կողմից 2014թ. օգոստոսի 5-ին կազմված ակտի համաձայն՝ «անբարենպաստ բնակլիմայական պայմաններից, կոնկրետ՝ ռոտզման ջրի պակասությունից չորացել է 4 հա արևածաղկի ցանքսը՝ 100%-ով, 5 հա եզիպտացորենի ցանքսը՝ 90%-ով, 1 հա բանջարեղենի ցանքսը՝ 90%-ով» /հատոր 1-ին, գ.թ. 80/:

4. «Մարտակերտի ջրային տնտեսություն» ՓԲԸ կողմից տրված 2015թ. մայիսի 8-ի թիվ 58 տեղեկանքի համաձայն՝ ըստ 08.05.2014թ. կնքած թիվ 86 ռոտզման ջրի մատակարարման պայմանագրի՝ 2014թ. մայիսի 10-19-ն ընկած ժամանակահատվածում մատակարարվել է 18600 խմ ջուր՝ վարձակալական հիմունքներով Ս.Գյուրջյանին պատկանող Նոր Հայկաջուր համայնքում գտնվող 10 հա հողատարածքի ռոտզման համար: Բնակլիմայական անբարենպաստ պայմանների պատճառով նշված հողատարածքին 2014թ. հունիս, հուլիս ամիսներին ռոտզման ջուր չի մատակարարվել: Միաժամանակ, նույն պայմանագրի համաձայն՝ Ս.Գյուրջյանին 1 հա բանջարաբուստանային կուլտուրաների մշակման համար 2014թ. մատակարարվել է ևս 10300 խմ ջուր /հատոր 1-ին, գ.թ. 63/:

5. ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 15-ի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի համաձայն՝ դատաքննությամբ հաստատվել է, որ Ընկերությունն իր պարտականությունները՝ ռոտզման ջրի մատակարարումը, չի կատարել պատշաճ: 2014թ. դրությամբ Ս.Գյուրջյանի պարտքն Ընկերությանը կազմել է ներկայացված 168.000 ՀՀ դրամից 113.000 ՀՀ դրամ, «60000 ՀՀ դրամի դիմաց ջուր չի մատակարարվել լրիվությամբ, այլ միայն մեկ անգամ է ջուր տրվել ..., ուստի 55.000 ՀՀ դրամի մասով հայրը ենթակա է մերժման» /հատոր 1-ին, գ.թ. 31-33/:

6. Առաջին ատյանի դատարանը 2018թ. հուլիսի 13-ի վճռով, հաստատված համարելով, որ 1 /մեկ/ հեկտար բանջարաբուստանային կուլտուրաների թերի ջրամատակարարման հետևանքով Հայցվորին պատճառվել է վնաս, հայցը մերժել է այն պատճառաբանությամբ, որ հայցվոր կողմը, կրելով պատճառված վնասի չափն ապացուցելու պարտականությունը, չի ներկայացրել որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույց մեկ հեկտարում մշակված բանջարաբուստանային կուլտուրաների /տաքդեղ, լոբի, լոլիկ, սմբուկ/ տեսակների և դրանց քանակի կամ յուրաքանչյուրի մասով մշակված հողատարածքի չափերի մասին, որը թույլ կտար կատարել համապատասխան հաշվարկ, ինչպես նաև չի ներկայացրել պահպանված բերքի արժեքը՝ հանած հողային կադաստրով նախատեսված գյուղատնտեսական հողատեսքի զուտ եկամտի և կատարված հաշվարկային ծախսի չափով վնասի մասին հաշվարկը /հատոր 1-ին, գ.թ. 9-10/:

7. Վերաքննիչ դատարանը, «հիմք ընդունելով ... աշխատանքների ծավալը և դրանց վրա Հայցվորի կողմից կատարված ծախսերը Պատասխանողի կողմից որևէ թույլատրելի ապացույցներով չվիճարկվելու հանգամանքը», կիրառելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, 1058-րդ

հողվածները, բեկանել ու փոփոխել է Առաջին ատյանի դատարանի վճիռը և հայցը բավարարել /հատոր 2-րդ, գ.թ. 27-37/:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝ 1/ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, 2/ Վերաքննիչ դատարանի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի /ներկայումս գործող օրենսգրքի 1061-րդ հոդվածի/ կիրառման, կառավարության որոշումների, կողմերի միջև կնքված պայմանագրի սխալ մեկնաբանման, Վերաքննիչ դատարանի կողմից ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ, 49-րդ հոդվածների սխալ կիրառման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա:

Գերագույն դատարանը, վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով Վերաքննիչ դատարանի որոշումը, գտնում է, որ բողոքը պետք է բավարարել և Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանել և գործը մեկ հեկտար բանջարաբոստանային կուլտուրաների մասով, ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Արցախի Հանրապետության Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք, յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ /ԱՀ Սահմանադրության 74-րդ հոդված/:

Սույն վճռաբեկ բողոքում բարձրացվել են քաղաքացիական պատասխանատվության իրավական կարգավորման, այն է՝ կողմերի միջև կնքված պայմանագրից ծագող պատասխանատվության, նշված պատասխանատվության ծավալին, «պայմանագիր և օրենք» հասկացությունների փոխհարաբերության, պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվության, դատարանի կողմից գործի պատշաճ քննության, իրավական ակտերի գործողության վերաբերող հարցերը:

Վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Գերագույն դատարանը պետք է պարզի հետևյալ հարցերը.

1/ Վերաքննիչ դատարանը խախտե՞լ է արդյոք ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ և 49-րդ հոդվածների պահանջները և գործով ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել.

2/ Հայցվորին պատճառվե՞լ է արդյոք վնաս, և Պատասխանողը կրո՞ւմ է արդյոք պատասխանատվություն այդ վնասի համար.

3/ Վերաքննիչ դատարանը կողմերի միջև ծագած վեճի վերաբերյալ իրավաչա՞փ է կիրառել իրավահարաբերության ծագման պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ և 1058-րդ հոդվածների պահանջները:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի «Քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագումը: Քաղաքացիական իրավունքների իրակա-

նացումը» և «Քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը» վերտա-
ռությամբ համապատասխանաբար 2-րդ և 3-րդ գլուխները սահմանում են
քաղաքացիական իրավունքների ծագման հիմքերը և քաղաքացիական իրա-
վունքների պաշտպանության եղանակները, վնասի հասկացությունը և այլն:

Այսպես՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի
համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները
ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից,
ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողու-
թյուններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված
չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջաց-
նում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ: Դրան
համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականություն-
ները ծագում են օրենքով նախատեսված պայմանագրերից ...:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝
քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող
հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարու-
թյան և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության,
պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական
միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների
անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների
վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության
սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիները և
իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու
իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց...:

Պարտավորության հասկացությունը և ծագման հիմքերը սահմանված
են ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասով: Նշված
նորմի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը /պարտապանը/
պարտավոր է մեկ այլ անձի /պարտատիրոջ/ օգտին կատարել որոշակի
գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք,
մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն
կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել
կատարելու իր պարտականությունը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն
պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու
հետևանքով և նույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝
պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության
պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին
համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության
դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար
ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 436-րդ հոդվածի 3-րդ մասը
սահմանում է, որ պայմանագրից ծագող պարտավորությունների նկատմամբ
կիրառվում են պարտավորությունների մասին ընդհանուր դրույթները, եթե
այլ բան նախատեսված չէ նույն գլխի /Պայմանագրերի հասկացությունը և
պայմանները/ և պայմանագրերի առանձին տեսակների մասին նույն
օրենսգրքի կանոններով:

Միաժամանակ, օրենսդիրը սահմանում է, որ պայմանագիրը պետք է
համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական
ակտերով սահմանված կողմերի համար պարտադիր կանոններին/
իմպերատիվ նորմերին/:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ
պայմանագրի կողմերը՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք ազատ
են պայմանագիր կնքելիս: Պայմանագրի պայմանները որոշվում են կողմերի

հայեցողությամբ, բացի այն դեպքերից, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է օրենքով կամ այլ իրավական ակտերով /ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդված/:

Ինչպես հետևում է սույն գործով կողմերի միջև կնքված պայմանագրի բովանդակությունից, դրա նկատմամբ կիրառելի են էներգամատակարարման պայմանագրի կարգավորմանը վերաբերող իրավական նորմերը, ինչը բխում է կողմերի միջև իրավահարաբերության ծագման պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի /ուսն ներկայումս գործող քաղաքացիական օրենսգրքի/ 560-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներից, համաձայն որոնց՝ միացված ցանցի միջոցով գազի, ..., ջրի ...մատակարարման հետ կապված հարաբերությունների նկատմամբ էներգամատակարարման պայմանագրի մասին կանոնները /550-559-րդ հոդվածներով/ կիրառվում են, եթե այլ բան սահմանված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ չի բխում այդ պարտավորության էությունից: Իսկ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «էներգամատակարարման պայմանագրով պատասխանատվությունը» վերտառությամբ 559-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ էներգամատակարարման պայմանագրով պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում պարտավորությունը խախտած կողմը պարտավոր է մյուս կողմին հատուցել պատճառված իրական վնասը /17-րդ հոդվածի 2-րդ մաս/:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Վնասների հատուցում» վերտառությամբ 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը /իրական վնաս/, չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր /բաց թողնված օգուտ/, ինչպես նաև ոչ նյութական վնասը:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիաիրավական պատասխանատվության սկզբունքն է վնասների լրիվ հատուցումը: Վնասների հատուցման ավելի պակաս չափ կարող է նախատեսվել օրենքով կամ պայմանագրով: Նույն մոտեցումը սահմանված է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Պարտավորության խախտմամբ առաջացած վնասները հատուցելը» վերտառությամբ 409-րդ հոդվածի 3-րդ մասով, համաձայն որի՝ վնասները որոշելիս նկատի են առնվում ... այն վայրում գոյություն ունեցող գները, որտեղ պարտավորությունը պետք է կատարվեր ..., եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ վնասների առկայության և դրանց չափի ապացուցման պարտականությունը դրված է տուժողի վրա և վնասների չափը պետք է հիմնավորվի ճշգրիտ տվյալներով:

Օրենսդիրը սահմանել է պարտավորությունների համար պատասխանատվության չափը սահմանափակելու վերաբերյալ նորմ: Այսպես, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Պարտավորությունների համար պատասխանատվության չափը սահմանափակելը» վերտառությամբ 416-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորությունների առանձին տեսակների և գործունեության որոշ տեսակների հետ կապված պարտավորությունների համար օրենքով կարող է սահմանվել վնասները ոչ լրիվ հատուցելու իրավունք /սահմանափակ պատասխանատվություն/:

Ինչպես հետևում է վերը նշված իրավանորմերի մեկնաբանությունից, ջրամատակարարման պայմանագրից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունն առանձնահատուկ է նրանով, որ պարտականությունը խախտող կողմը պարտավոր է մյուս կողմին փոխհատուցել միայն իրական վնասները: Այսինքն՝ բաց թողնված օգուտը հատուցման ենթակա չէ:

Գերագույն դատարանը փաստում է, որ վերը նշված իրավական նորմերի մեկնաբանությունից հետևում է նաև, որ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվության չափը կարող է նախատեսվել պայմանագրով:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածը սահմանում է պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության հիմքերը, ընդ որում սահմանելով, որ պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու մեղքի բացակայությունն ապացուցում է պարտավորությունը խախտած անձը: ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Երկու կողմերի մեղքով պարտավորությունը խախտելու հետևանքները» վերտառությամբ 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ պարտապանն ազատվում է պատասխանատվությունից, եթե բացակայում է օրենքով նախատեսված այն հիմքերից որևէ մեկը, որն անհրաժեշտ է պարտավորությունը չկատարած կամ ոչ պատշաճ կատարած պարտապանին պատասխանատվության ենթարկելու համար: Բացի դրանից, կոնկրետ պարտավորությունների խախտման համար պատասխանատվությունից ազատելու հիմքեր կարող են նախատեսվել օրենքով կամ պայմանագրով:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ անհրաժեշտ է տարբերել պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվությունը: Պայմանագրային պատասխանատվությունը ծագում է /վրա է հասնում/ պայմանագրից ծագող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով, իսկ արտապայմանագրային պատասխանատվությունը տեղի է ունենում, որպես կանոն, երբ վնասը պատճառվել է տուժողին այն անձի կողմից, որի հետ ինքը չի գտնվում պայմանագրային հարաբերությունների մեջ: ԼՂՀ քաղաքացիական օրենսդրությունը ելնում է դրանից, որ հայց կարող է ներկայացվել հիմքերից մեկով՝ պայմանագրային կամ արտապայմանագրային պատասխանատվությունը վրա հասնելու: Մակայն նշված ընդհանուր կանոնից բացի օրենսդիրը նախատեսել է դեպքեր, երբ որ այն նորմերը, որոնք կարգավորում են արտապայմանագրային հարաբերությունները, տարածվում են նաև առանձին պայմանագրերից ծագող պարտավորությունների վրա: Այլ կերպ՝ այն կանոններով, որով կանոնակարգվում են դելիկտային պարտավորությունները, կարող է հատուցվել վնասը, որն առաջացել է պայմանագրային պարտավորությունները խախտելու արդյունքում /օրինակ՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1082-րդ հոդվածը/:

Հետևաբար, անհիմն է սույն գործով կողմերի միջև դելիկտային իրավահարաբերությունների առկայության ու ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածը կիրառելու մասին Վերաքննիչ դատարանի եզրահանգումը, քանի որ տվյալ դեպքում խոսքը գնում է պայմանագրից ծագող պարտավորությունների, հետևաբար և պայմանագրից ծագող պատասխանատվության մասին, այլ ոչ թե վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունների:

Վերոգրյալ պատճառաբանությամբ Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքի փաստարկները հիմնավոր են. Վերաքննիչ դատարանը չպետք է կիրառեր ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ /ներկայումս գործող օրենսգրքի 1061-րդ/ հոդվածը:

Գերագույն դատարանը փաստում է, որ դատարանի դատական ակտն անփոփոխ, իսկ վճռաբեկ բողոքն առանց բավարարման է թողնվում այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանի դատական ակտը օրինական, հիմնավորված և պատճառաբանված է, իսկ վճռաբեկ բողոքում նշված փաստարկներն էական չեն գործի համար, այսինքն՝ դատարանը ճիշտ է մեկնաբանել և կիրառել նյութական և դատավարական իրավունքի նորմերը:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասը պահանջում է, որ դատարանի վճիռը լինի օրինական, հիմնավորված և պատճառաբանված:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի վճիռն օրինական է, եթե այն կայացվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության, նույն օրենսգրքի, այլ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառելի են տվյալ գործը քննելիս: Առաջին ատյանի դատարանի վճիռը պատճառաբանված է, եթե դրանում երևում են փաստերի հաստատման, ապացույցների գնահատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները /ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121.1-ին հոդվածի 3-րդ մաս/:

Վերաքննիչ դատարանի կողմից կայացվող որոշմանը վերաբերող ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքներով վերաքննիչ դատարանը կայացնում է որոշում, որը պետք է բավարարի նույն օրենսգրքի 121.1-ին հոդվածով սահմանված պահանջները:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: 2. Դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ սույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերի»: Իսկ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատարանի առջև բոլոր դեպքերում խնդիր է դրված առավելագույնս պարզել գործի իրական հանգամանքները, կողմերի իրավունքներն ու պարտականությունները, փաստերի և իրավունքների իրականությանը համընկնելը և կայացնել դատարանում պարզված հանգամանքներին համապատասխան դատական ակտ: Գերագույն դատարանը փաստում է, որ այդ խնդիրը լուծելու համար դատարանները պետք է անհրաժեշտ պայմաններ ստեղծեն գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության համար,

որպեսզի ապահովվի, պաշտպանվի քաղաքացիների, իրավաբանական անձանց, պետության իրավունքները և ազատությունները: Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ դատարանները պետք է նկատի ունենան, որ յուրաքանչյուր գործ իր բնույթով, փաստական հանգամանքներով եզակի է, հետևաբար դատարանի պարտականությունների մեջ է մտնում որոշելը, թե տվյալ գործով ինչ օրենքներ և այլ իրավական ակտեր են ենթակա կիրառման և ինչպես պետք է դրանք կիրառվեն:

Գերագույն դատարանը, կողմերի միջև 08.05.2014թ. կնքված Պայմանագիրը մեկնաբանելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ, արձանագրում է, որ դրա կողմերը, ելնելով կամքի ինքնավարության, պայմանագրի ազատության, քաղաքացիական իրավունքներն իրենց կամքով և ի շահ իրենց ձեռք բերելու ու իրականացնելու, պայմանագրի հիման վրա իրենց իրավունքներն ու պարտականություններն ազատ սահմանելու սկզբունքներից, Պայմանագրի 12-րդ կետով սահմանել են պատասխանատվության չափը /տես՝ սույն որոշման՝ «Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը» վերտառությամբ 3-րդ բաժնի 1-ին կետը/: Պայմանագրի վերլուծությունից հետևում է, որ հատուցման ենթակա վնասի հաշվարկման կարգը և չափը պետք է որոշվեր Հայցվորի և Պատասխանողի միջև կնքված Պայմանագրի 12-րդ կետով, այլ ոչ թե քաղաքացիական օրենսգրքի դրույթներով, հետևաբար Վերաքննիչ դատարանը պետք է Պատասխանողի պատասխանատվության հարցը քննարկման առարկա դարձներ հենց նշված պայմանագրի դրույթների համատեքստում: Հետևաբար, հիմնավոր են նաև Վերաքննիչ դատարանի կողմից ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ, 49-րդ հոդվածների պահանջների խախտման մասին վճարել բողոքի փաստարկները:

Անդրադառնալով վնասի հաշվարկ չներկայացնելու հիմքով հայցը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի հետևությանը, Գերագույն դատարանն արձանագրում է հետևյալը.

Օրենսդիրը ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետում սահմանել է, որ հայցադիմումում պետք է նշվեն բռնագանձման ենթակա կամ վիճարկվող գումարի հաշվարկը /չնշելու դեպքում հայցադիմումը նույն օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն վերադարձվում է/: Հայցվորի կողմից նշված պահանջը չկատարելը կարող է շտկվել նաև գործի դատական քննության նախապատրաստման, դատական քննության փուլերում, և դատական քննության նախապատրաստման փուլի անմիջական նպատակը գործի ճիշտ և ժամանակին քննությունը հենց առաջին դատական նիստում ապահովելն է: Ուստի, Գերագույն դատարանը գտնում է, որ 1 հա բանջարաբոստանային կուլտուրաների մասով Առաջին ատյանի դատարանը լրիվ և բազմակողմանի քննություն չի կատարել, մնացած մասով դատարանը ճիշտ հետևության է եկել:

Քննարկելով իրավական ակտերի գործողության վերաբերյալ վճարել բողոքում բարձրացված հարցը, Գերագույն դատարանը փաստում է, որ նշված հարցը կարգավորվում է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքով, «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքով:

Այսպես՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի /նախկինում և ներկայումս գործող/ 5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քաղաքացիական օրենսդրության ակտերը և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն և կիրառվում են ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների նկատմամբ:

Օրենքի գործողությունը մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա տարածվում է միայն այն դեպքերում, երբ դա ուղղակիորեն նախատեսված է օրենքով:

2. Մինչև քաղաքացիական օրենսդրության ակտի կամ այլ իրավական ակտի ուժի մեջ մտնելը ծագած հարաբերություններով այն կիրառվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած իրավունքների և պարտականությունների նկատմամբ: Մինչև քաղաքացիական օրենսդրության ակտի կամ այլ իրավական ակտի ուժի մեջ մտնելը կնքված պայմանագրի կողմերի հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքի 438-րդ հոդվածին համապատասխան:»:

Վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 4-րդ հոդվածի 3-րդ /ներկայումս գործող օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ/ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի և այլ օրենքների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի հրամանագրերի հիման վրա ու ի կատարումն դրանց՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունն իրավունք ունի ընդունել քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող որոշումներ: Նույն հոդվածի 4-րդ /ներկայումս գործող օրենսգրքի 3-րդ/ մասը սահմանում է, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի հրամանագիրը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշումը սույն օրենսգրքին կամ այլ օրենքի հակասելու դեպքում կիրառվում է սույն օրենսգրքը կամ համապատասխան օրենքը:

«Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 79-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ պարբերությունների համաձայն՝ մինչև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտի ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա տարածվում են մինչև փոփոխությունները կամ լրացումներն ուժի մեջ մտնելը գործող նորմերը, եթե նույն օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ, ուժը կորցրած իրավական ակտի գործողությունը տարածվում է մինչև դրա ուժը կորցնելու օրը ծագած հարաբերությունների վրա, եթե նույն օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Գերագույն դատարանը, վերլուծելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային գույտ եկամուտները հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 16-ի թիվ 67 և 2005 թվականի օգոստոսի 23-ի թիվ 359 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԼՂՀ կառավարության 2009 թվականի մայիսի 21-ի N 331-Ն որոշումը և որոշման 4-րդ կետում /որոշման ուժի մեջ մտնելու մասին կետը/ ԼՂՀ կառավարության 27.11.2009թ. N 753-Ն, 24.08.2010թ. N 541-Ն, 25.09.2013թ. N 666-Ն, 12.02.2015թ. N 63-Ն որոշումներով կատարված փոփոխությունները, արձանագրում է, որ նշված որոշումն ընդունելիս որոշման ուժի մեջ մտնելու ժամկետ էր սահմանված «2010 թվականի հունվարի 1-ից» /որոշման 4-րդ կետ/, հետագայում նշված կետը ենթարկվել է փոփոխությունների և նոր խմբագրության, ընդ որում՝ վիճելի իրավահարաբերությունների ծագման պահին գործել է հետևյալ խմբագրությունը. «Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից, իսկ գործողությունը տարածվում է 2015 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա»: Հետևաբար, տվյալ պահին ԼՂՀ կառավարության 16.03.2009թ. որոշման մեջ նշված իրավական ակտերի դրույթները դեռ գործում էին: Նման մոտեցումը բխում է նաև «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի՝ «Իրավական ակտի գործողության դադարումը» վերտառությամբ 72-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներից, համաձայն որոնց՝ իրավական ակտի գործողության դադարեցման մասին իրավական ակտ ընդունելու դեպքում գործողությունը դադարեցված իրավական ակտով կամ դրա համաձայն գործողությունը դադարեցված իրավական ակտերի

գործողությունը չի վերականգնվում, գործողությունը դադարեցված իրավական ակտի գործողությունը կարող է վերականգնվել միայն համապատասխան իրավական ակտով՝ գործողությունը դադարեցված իրավական ակտի գործողության վերականգնման մասին ուղղակի դրույթի առկայության դեպքում:

Գերագույն դատարանը, մեկնաբանելով «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 72-րդ հոդվածի վերը նշված դրույթը, և հիմք ընդունելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Քաղաքացիական իրավական նորմերի մեկնաբանումը» և «Քաղաքացիական օրենսդրության սկզբունքները» վերտառությամբ 8-րդ և 3-րդ հոդվածների պահանջները, հարկ է համարում նշել, որ քաղաքացիական իրավունքում նախապատվությունը տրվում է քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը և հանգում է այն եզրակացության, որ վճռաբեկ բողոքի փաստարկները՝ վերը նշվածի վերաբերյալ ևս հիմնավոր են, հետևաբար անհիմն է Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ 2013թ. հունվարի 1-ից մինչև 2016թ. հունվարի 1-ը ԼՂՀ-ում գոյություն չունեին որևէ իրավական ակտ, որով հաստատված լինեին հողային կադաստրով նախատեսված գյուղատնտեսական հողատարածքների գուտ եկամուտները, այսինքն՝ Պայմանագրի 12-րդ կետում նշված՝ վնասի չափի հաշվարկման համար հիմք ընդունվող անհրաժեշտ պայմանը:

Ինչ վերաբերում է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 217-րդ և 229-րդ հոդվածների պահանջների խախտման մասին վճռաբեկ բողոքի փաստարկներին, ապա Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ համաձայն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի՝ դատարանն իրավասու է օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի ճանաչելու դեպքում, վերականգնելու բաց թողնված ժամկետը: Ըստ Գերագույն դատարանի նախադեպային պրակտիկայի՝ դատական ակտն ուշ ստանալը բաց թողնված դատավարական ժամկետի վերականգնման հիմք է հանդիսանում: Հայցվորը վերաքննիչ բողոքում պահանջել է բեկանել վճիռը և այն փոփոխել ու հայցապահանջն ամբողջությամբ բավարարել: Ուստի, Վերաքննիչ դատարանը բողոքարկման ժամկետը վերականգնելիս գործել է իրավաչափ և վերաքննության սահմանները չի խախտել:

Ամփոփելով վերը շարադրվածը, Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքի մյուս հիմքերը բավարար են Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված Գերագույն դատարանի լիազորությունը, որի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Գերագույն դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Զբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ:

Գործի նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանին անհրաժեշտ է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննել 1 հա բանջարաբոստանային կուլտուրաների մասով հայցապահանջը /ըստ Պայմանագրի/, հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտած դիրքորոշումները և կայացնել օրինական, հիմնավորված և պատճառաբանված վճիռ: Մնացած մասով Առաջին ատյանի դատարանի 13.07.2018թ. վճիռը պետք է թողնել օրինական ուժի մեջ:

5.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

Անդրադառնալով դատական ծախսերի հարցին՝ Գերագույն դատարանն արձանագրում է, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: ... 3. Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն հոդվածի կանոններին համապատասխան»:

Գերագույն դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության արդյունքներով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ջրային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Վ.Դանիելյանի վճռաբեկ բողոքը բավարարել: ԱՀ վերաքննիչ դատարանի 2018թ. հոկտեմբերի 5-ի որոշումը բեկանել և գործը՝ սույն որոշման մեջ նշված ծավալով ուղարկել ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության: Մնացած մասով Առաջին ատյանի դատարանի 13.07.2018թ. վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքներով:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝	<u>ստորագրություն</u>	Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝	<u>ստորագրություն</u>	Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Հ.ԱԲՐԱՀԱՍՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Կ.ՂԱՐԱՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում Քաղաքացիական գործ ԸԻԴ/3505/02/17
Քաղաքացիական գործ ԸԻԴ/3505/02/17
Նախագահող դատավոր՝ Ռ.Զհանգիրյան
Դատավորներ՝ Լ.Ավանեսյան
Մ.Ավանեսյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք.Ստեփանակերտ

25 փետրվարի 2019թ.

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝ վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝	Ն.Նարիմանյանի
մասնակցությամբ՝ դատավորներ	Հ.Խաչատրյանի
	Հ.Աբրահամյանի
	Գ.Գրիգորյանի
	Ի.Կարապետյանի

գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի Նունե Մուշեղի Ղազարյանի ընդդեմ Արտակ Յուրիկի Ադամյանի՝ 2.000.000 ՀՀ դրամ փոխառության գումար և 2014թ. հոկտեմբերի 16-ից մինչև պարտավորության դադարման օրը նշված գումարի նկատմամբ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները գանձելու պահանջի մասին ԸԻԴ/3505/02/17 քաղաքացիական գործով ԱՀ վերաքննիչ դատարանի 2019 թվականի հունվարի 11-ի՝ «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ պատասխանող Ա.Ադամյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

Նունե Մուշեղի Ղազարյանը 2017 թվականի հոկտեմբերին դիմել է ԱՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան /այսուհետ նաև՝ Առաջին աստիճանի դատարան/ ընդդեմ Արտակ Յուրիկի Ադամյանի՝ 2.000.000 ՀՀ դրամ փոխառության գումար և 2014թ. հոկտեմբերի 16-ից մինչև պարտավորության դադարման օրը նշված գումարի նկատմամբ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները գանձելու պահանջով:

Առաջին աստիճանի դատարանի 2018 թվականի մարտի 26-ի վճռով հայցն ամբողջությամբ մերժվել է:

ԱՀ վերաքննիչ դատարանի /այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան/ 2018 թվականի հունիսի 29-ի որոշմամբ Ն.Ղազարյանի վերաքննիչ բողոքի հիման վրա նշված վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել նույն դատարան՝ նոր քննության:

Նոր քննության արդյունքում Առաջին աստիճանի դատարանը 2018 թվականի հոկտեմբերի 19-ի վճռով հայցը բավարարել է մասնակիորեն:

Նշված վճռի դեմ Արտակ Ադամյանը /ներկայացուցիչ Ատլեն Մկրտումյան/ վերաքննիչ բողոք է բերել 2018 թվականի նոյեմբերի 19-ին:

Վերաքննիչ դատարանի 2018 թվականի նոյեմբերի 29-ի որոշմամբ Արտակ Ադամյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է՝ վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու համար սահմանելով երկշաբաթյա ժամկետ:

Վերաքննիչ դատարանի նշված որոշումը բողոք բերող անձը ստացել է 2018 թվականի դեկտեմբերի 23-ին:

Ա.Ադամյանը փոստային ծառայությանը հանձնելու միջոցով կրկին ներկայացրել է վերաքննիչ բողոքը, որը Վերաքննիչ դատարանի գրասենյակ է մուտքագրվել 2019 թվականի հունվարի 11-ին և նույն օրը հանձնվել դատական կազմին:

Վերաքննիչ դատարանի 2019 թվականի հունվարի 11-ի որոշմամբ վերադարձվել է Առաջին ատյանի դատարանի 2018 թվականի հոկտեմբերի 19-ի վճռի դեմ Արտակ Ադամյանի կողմից բերված վերաքննիչ բողոքը:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ 2019 թվականի փետրվարի 05-ին վճռաբեկ բողոք է բերել պատասխանող Ա.Ադամյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի առերևույթ խախտման հիմքերով:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի պահանջները, պետք է կիրառեր նույն օրենսգրքի 224-րդ հոդվածի պահանջները:

Վկայակոչելով նշված նորմերի օրենսդրական շարադրանքը, բողոքաբերը նշում է, որ ստորադաս դատարանի որոշումը ստացել է 2018 թվականի դեկտեմբերի 23-ին և խախտումները վերացնելուց հետո այն կրկին ներկայացրել է ոչ թե 2019 թվականի հունվարի 10-ին, այլ նույն թվականի հունվարի 08-ին, որը հաստատվում է նաև «Արցախփոստ» ՓԲ ընկերության կողմից տրամադրված թիվ 39 անդորրագրով:

Ավելին, 2018 թվականի նոյեմբերի 29-ի վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը ստացել է 2018 թվականի դեկտեմբերի 23-ին, այսինքն՝ վերաքննիչ բողոքը ներկայացնելու երկշաբաթյա ժամկետի ավարտման օրն է 2019 թվականի հունվարի 06-ը, իսկ քանի որ 2019 թվականի հունվարի 06-ը և 07-ը ոչ աշխատանքային օրեր էին՝ ժամկետի ավարտման օրը պետք է համարվի հունվարի 08-ը, իսկ վերաքննիչ բողոքը «Արցախփոստ» ՓԲ ընկերության միջոցով ուղարկվել է նույն թվականի հունվարի 08-ին:

Ըստ բողոքի՝ ստորադաս դատարանը պատճառաբանել է, որ վերաքննիչ բողոքը, փոստային ծառայությանը հանձնելու միջոցով, կրկին ներկայացրել է 2019 թվականի հունվարի 10-ին:

Բողոքաբերը նշում է նաև, որ ստորադաս դատարանի բողոքարկվող որոշման արդյունքում իր պարտավորությունները կատարած լինելով հայցվորի հանդեպ՝ գրկվել է 2018 թվականի հոկտեմբերի 19-ին կայացված վճիռը բողոքարկելու իրավունքից:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը բողոքաբերը հիմնավորել է գործի էլքի վրա ազդեցություն ունեցող նյութական և դատավարական իրավունք-ների նորմերի խախտումների առկայության և Գերագույն դատարանի կայաց-վելիք որոշման օրենքի միատեսակ կիրառության համար էական նշանակու-թյուն ունենալու ու իրավունքի զարգացմանը նպաստելու հանգամանքներով:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է վերացնել Վերաքննիչ դատարանի 2019 թվականի հունվարի 11-ի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

3. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Գերագույն դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման և իրավունքի զարգացման Գերագույն դատարանի գործառնություններից, և գտնում, որ սույն գործով արտահայտված իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկայի ձևավորման համար:

ԱՀ Սահմանադրության /այսուհետ, նաև՝ Սահմանադրություն/ 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի /այսուհետ, նաև՝ Կոնվենցիա/ 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Վկայակոչված կոնվենցիոն և սահմանադրական նորմերից ուղղակիորեն բխում է, որ յուրաքանչյուր անձ ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում՝ հրապարակման պահից մեկ ամիս հետո, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված դեպքերի:

Նույն օրենսգրքի 217-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:

Նշված նորմերից հետևում է, որ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված է մեկամսյա ժամկետ:

Նույն օրենսգրքի 223-րդ հոդվածի համաձայն. «1.Վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե՝

1/ չեն պահպանվել սույն օրենսգրքի 220-րդ հոդվածի պահանջները.

2/ վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողած ժամկետը վերականգնելու մասին, կամ նման միջնորդությունը չի բավարարել դատարանը.

3/ մինչև վերաքննիչ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը բողոք բերած անձից դիմում է ստացվել այն հետ վերցնելու մասին.

4/ բողոքը ներկայացրել է այն անձը, ով ստորադաս դատարանի դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի.

5/ բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման.

6/ գործին մասնակցող անձանց միջև առկա է վերաքննության իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնություն, և նման համաձայնություն կնքած մյուս կողմը չի համաձայնվել գործը վերաքննիչ դատարանում քննելու վերաբերյալ:

2. Վերաքննիչ դատարանը, սույն օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, գործը ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում,

կայացնում է որոշում վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին: Որոշման մեջ նշվում են բողոքում թույլ տրված բոլոր առերևույթ խախտումները: Նման որոշման դեպքում բողոք բերող անձին պատշաճ ձևով ուղարկվում է միայն վերաքննիչ դատարանի որոշումը:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում կրկին ներկայացնելու դեպքում բողոքը համարվում է դատարանում ընդունված: Բողոքը կրկին ներկայացվելու դեպքում խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում:

4. Վերաքննիչ դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով՝ որոշումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում»:

«Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 85-րդ հոդվածի համաձայն. «1. Եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը:

Սակայն, եթե այդ գործողությունը պետք է կատարվի հիմնարկում կամ կազմակերպությունում, ապա ժամկետը լրանում է այն ժամին, երբ այդ կազմակերպությունում կամ հիմնարկում սահմանված կանոններով դադարեցվում են համապատասխան գործառնությունները:

2. Մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը կապի կազմակերպությանը տրված փաստաթղթերը համարվում են ժամկետին տրված»:

Վկայակոչված իրավանորմի վերլուծությունից հետևում է, որ սահմանված փաստաթղթերը կապի կազմակերպությանը հանձնելու իրավական հետևանքները հավասարեցվում են դրանք համապատասխան հասցեատիրոջը տալուն:

Գերագույն դատարանը գտնում է, որ «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 85-րդ հոդվածի նշված դրույթը ենթակա է կիրառման նաև քաղաքացիական դատավարության իրավահարաբերությունների նկատմամբ, որից էլ բխում է, որ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00 կապի կազմակերպությանը հանձնված վերաքննիչ բողոքը պետք է համարվի Վերաքննիչ դատարանին հանձնված:

Սույն գործի փաստերի համաձայն, Վերաքննիչ դատարանը Արտակ Ադամյանի վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքում դրել է հետևյալ հանգամանքը. «Արտակ Ադամյանը Վերաքննիչ դատարանի 2018թ. նոյեմբերի 29-ի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումը ստացել է 2018թ. դեկտեմբերի 23-ին, այսինքն բողոքը կրկին ներկայացնելու երկշաբաթյա ժամկետի ավարտման օրն է 2019թ. հունվարի 6-ը, սակայն, քանի որ 2019թ. հունվարի 6-ը և 7-ը ոչ աշխատանքային օրեր էին, ժամկետի ավարտման օրը պետք է համարել 2019թ. հունվարի 8-ը, հետևաբար 2018թ. նոյեմբերի 19-ին ներկայացված բողոքը կարող էր կրկին ներկայացվել ոչ ուշ քան մինչև 2019թ. հունվարի 8-ը ժամը քսանչորսը, այնինչ ներկայացվել է 2019թ. հունվարի 10-ին: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ներկայացված բողոքը չի կարող համարվել ընդունված, քանի որ կրկին չի ներկայացվել վերաքննիչ բողոքը վերադարձնելու որոշումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում:

Բողոքարկվող վճիռը հրապարակվել է 2018թ. հոկտեմբերի 19-ին, հետևաբար այն կարող է բողոքարկվել մինչև 2018թ. նոյեմբերի 20-ը:

Քանի որ վերաքննիչ բողոքը ներկայացվել է 2019թ. հունվարի 10-ին, ուստի բողոքաբերը բաց է թողել Դատարանի վճիռը բողոքարկելու ժամկետը:» /գ.թ.28-29/: Գերագույն դատարանը գտնում է, որ նման եզրակացության հանգելու համար Վերաքննիչ դատարանը չի ունեցել բավարար հիմքեր, քանի

որ սույն գործի փաստերի համաձայն՝ փոստային ծառայության կողմից բողոքաբերին տված թիվ 39 անդորրագրի համաձայն՝ վերաքննիչ բողոքը նրա կողմից փոստային ծառայությանն է հանձնվել 08.01.2019թ., վերաքննիչ բողոքը հայցվոր Նունե Ղազարյանին ևս փոստային ծառայության միջոցով ուղարկվել է 08.01.2019թ. այսինքն՝ մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը տվյալ դեպքում սահմանափակել է ինչպես Արտակ Ադամյանի՝ դատարանի մատչելիության Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը, այնպես էլ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 217-րդ հոդվածով երաշխավորված վերադաս դատական ատյանում լաված լինելու իրավունքը: Գերագույն դատարանը փաստում է, որ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում է դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այնուհանդերձ, կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում և, եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն: Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Գերագույն դատարանը դիտում է բավարար ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու համար:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 2-րդ մասով, 254-257-րդ հոդվածներով Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ԱՀ վերաքննիչ դատարանի 2019 թվականի հունվարի 11-ի՝ «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

ստորագրություն

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ

ստորագրություն

Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

ստորագրություն

Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ստորագրություն

Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ստորագրություն

Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Առաջին ատյանի դատարանի 2016 թվականի նոյեմբերի 22-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և հարուցվել սույն քաղաքացիական գործը:

Առաջին ատյանի դատարանի 2017 թվականի հունվարի 23-ի որոշմամբ քաղաքացիական գործով նախնական դատական նիստ է հրավիրվել 2017 թվականի փետրվարի 16-ին:

Բյուրոն՝ ի դեմս գործադիր տնօրեն Վահան Ավետիսյանի, 2017 թվականի մարտի 7-ին «Հայցի հիմքը փոփոխելու և հայցային պահանջները հստակեցնելու վերաբերյալ» գրավոր դիմում է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ Պատասխանողներին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքից՝ ԱՀ ճարտար քաղաքում գտնվող Բնակելի տնից, Աիդա Մարտիրոսյանի 1/6 բաժինն առանձնացնելու ու դրա վրա բռնագանձում տարածելու, իսկ անհնարինության դեպքում՝ անշարժ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու և բռնագանձումն Աիդա Մարտիրոսյանի 1/6 բաժնի վրա տարածելու մասին պահանջներով:

Առաջին ատյանի դատարանի 2017 թվականի մարտի 27-ի որոշմամբ Բյուրոյի դիմումն ընդունվել է:

Առաջին ատյանի դատարանի 2017 թվականի մարտի 27-ի որոշմամբ պատասխանողներ Սերոբ և Մարգուշա Մարտիրոսյանները փոխարինվել են իրավահաջորդով՝ Պերճ Մարտիրոսյանով:

Առաջին ատյանի դատարանի 2017 թվականի ապրիլի 21-ի որոշմամբ գործով նշանակվել է դատաշինարարատեխնիկական-ապրանքագիտական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ԱՀ ԱՆ «Դատական փորձաքննությունների լաբորատորիա» ՊՈԱ կազմակերպությանը:

Առաջին ատյանի դատարանի նույն օրվա մեկ այլ որոշմամբ գործի վարույթը կասեցվել է՝ մինչև փորձագետի եզրակացությունը ստանալը:

2018 թվականի հունիսի 8-ին Առաջին ատյանի դատարանում ստացվել է փորձագետի 2018 թվականի հունիսի 7-ի ՀՆ՝ 16013/17 եզրակացությունը:

Առաջին ատյանի դատարանի 2018 թվականի հունիսի 11-ի որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է:

Առաջին ատյանի դատարանի /դատավոր Հ.Հարությունյան/ 2018 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ գործը նշանակվել է դատական քննության:

Առաջին ատյանի դատարանի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է. «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ հայցը ԼՂՀ Մարտունու շրջանի ճարտար քաղաքում գտնվող 186,91 քմ ընդհանուր մակերեսով բնակելի տնից Աիդա Մարտիրոսյանի 1/6 բաժինն առանձնացնելու պահանջի մասին մերժել: Աիդա Մարտիրոսյանին 1/6, Պերճ Մարտիրոսյանին 1/2, Վարդիթեր Մարտիրոսյանին 1/6, Քաջիկ Մարտիրոսյանին 1/6 բաժնեմասերով սեփականության իրավունքով պատկանող բնակելի տունը վաճառել հրապարակային սակարկություններով՝ վաճառքից ստացված գումարից Աիդա Մարտիրոսյանի 1/6 բաժինն ուղղել ԸԻԴ/2126/02/15թ. քաղաքացիական գործով պարտքի գումարի մարմանը, իսկ մնացած գումարը բաշխել սեփականության մասնակիցների միջև իրենց բաժիններին համաչափ: Վճռվել է նաև. «Աիդա Մարտիրոսյանից հոգուտ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ բռնագանձել 4.000 /չորս հազար/ ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքից կազմված գումար: Աիդա Մարտիրոսյանից հոգուտ «ԼՂՀ դատական փորձաքննությունների լաբորատորիա» ՊՈԱԿ-ի գանձել 19.150 ՀՀ դրամ՝ որպես փորձաքննության արժեքից կազմված դատական ծախս: «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ից հոգուտ «ԼՂՀ դատական փորձաքննությունների լաբորատորիա» ՊՈԱԿ-ի գանձել 19.150 ՀՀ դրամ՝ որպես փորձաքննության արժեքից կազմված դատական ծախս»:

Նշված վճռի դեմ, հայցի մերժման և դատական ծախսերի բաշխման մասով, 2018 թվականի հոկտեմբերի 18-ին վերաքննիչ բողոք է բերել «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Վ.Ավետիսյանը:

Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանը /այսուհետ՝ Վերաքննիչ դատարան/ 2018 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է և Առաջին ատյանի դատարանի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի վճիռը թողել օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ 2019 թվականի հունվարի 11-ին հայցվոր «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Վ.Ավետիսյանը՝ փոստային ծառայության միջոցով, ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Գերագույն դատարանում մուտքագրվել է 2019 թվականի հունվարի 18-ին:

Գերագույն դատարանի 2019 թվականի փետրվարի 5-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ԱՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի, 121.1-ին հոդվածի, 230-րդ հոդվածի 1-ին մասի, 69-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավորված և պատճառաբանված չէ, քանի որ այնտեղ շարադրված եզրահանգումները չեն համապատասխանում հետազոտված ապացույցներին:

Սույն քաղաքացիական գործով դատարանի կողմից արձանագրվել է, որ ապացուցված են այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում պահանջատերն իրավունք ունի պահանջելու բռնագանձում տարածել ընդհանուր սեփականության իրավունքում պարտապանի բաժնի վրա ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածին համապատասխան: Միննույն ժամանակ, Առաջին ատյանի դատարանը գտել է, որ Բյուրոյի հայցը՝ բաժինն առանձնացնելու պահանջի մասով, ենթակա է մերժման, իսկ հրապարակային սակարկություններով վաճառելու՝ բավարարման: Ըստ այդմ, Առաջին ատյանի դատարանը դատական ծախսերը կողմերի միջև բաշխել է հավասարաչափ՝ 50/50 համամասնությամբ: Վերաքննիչ դատարանը վերահաստատել է Առաջին ատյանի դատարանի դիրքորոշումը: Մինչդեռ, Բյուրոյի որևէ պահանջ չի մերժվել, Բյուրոյի հայցն ամբողջությամբ բավարարվել է:

Ըստ բողոքի՝ Բյուրոն Առաջին ատյանի դատարանին չի խնդրել գույքից առանձնացնել բաժին և դրա անհնարինության դեպքում վաճառել գույքը, այդպիսի ձևակերպման դեպքում կստացվեր, որ Բյուրոյի պահանջներից մեկը մերժվել է, իսկ մյուսը՝ բավարարվել: Բյուրոն խնդրել է Առաջին ատյանի դատարանից գույքից առանձնացնել բաժին կամ դրա անհնարինության դեպքում վաճառել գույքը: Այսինքն, «կամ» շաղկապով առանձնացված պայմաններից որևէ մեկի բավարարումը Բյուրոյի հայցապահանջի ոչ թե մասնակի, այլ ամբողջական բավարարում է: Գործի քննության ընթացքում պարզվել է, որ գույքից անհնար է բաժին առանձնացնել, ուստի Բյուրոյի միակ պահանջը, որը սույն գործով կարող էր բավարարվել կամ մերժվել, գույքի վաճառքի պահանջն է, որն ամբողջությամբ բավարարվել է:

Բողոքաբերի նշմամբ՝ ստորադաս դատարանների դիրքորոշումների պայմաններում ստացվում է, որ նմանատիպ գործերով Բյուրոն մշտապես պետք է կրի դատական ծախսերի 50 տոկոսն իր միջոցներով կատարելու պարտականություն, մինչդեռ Բյուրոն հանդիսանում է անվիճելի պահանջով հայցվոր:

Բողոքաբերի պնդմամբ, Բյուրոյի մասնակցությամբ նույն առարկայի վերաբերյալ հարյուրավոր գործերով կայացված դատական ակտերով ո՛չ ՀՀ, ո՛չ ԱՀ դատարանների որևէ այլ դատավոր երբևէ նման մոտեցում չի ցուցաբերել, համարելով, որ Բյուրոյի պահանջը բավարարվել է ամբողջությամբ:

Մեջբերելով ԱՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121.1-ին, 230-րդ, 49-րդ հոդվածների բովանդակությունը, բողոքաբերը նշել է, որ դատարանները խախտել են իրավական որոշակիության սկզբունքը՝ վեճի լուծման ժամանակ իրավակիրառ մարմնի գործողությունները կանխատեսելի չեն, ապահովված չէ հարաբերությունների կայունությունը:

Վճարելի բողոքին կցելով ԱՀ Գերագույն դատարանի և Առաջին ատյանի դատարանի վեց դատական ակտ, բողոքաբերը փաստել է, որ մի դեպքում Բյուրոյից գանձվում է 4.000 ՀՀ դրամ պետական տուրք, մյուս դեպքում՝ 8.000 ՀՀ դրամ, այսինքն՝ միննույն հարցի վերաբերյալ դրսևորվել են տարբեր մոտեցումներ:

Բողոքաբերը վճարելի բողոքը վարույթ ընդունելը հիմնավորել է նրանով, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար /քանի որ դատարանները տարբեր գործերով դատական ծախսերի բաշխման վերաբերյալ տարբեր որոշումներ են կայացնում/, և որ ստորադաս դատարանի կողմից թույլ է տրվել առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա:

Ելնելով վերոգրյալից, բողոքաբերը խնդրել է վճարելի բողոքն ընդունել վարույթ, ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 18-ի որոշումը և փոփոխել այն՝ Բյուրոյի հայցային պահանջները համարելով ամբողջությամբ բավարարված /ամբողջությամբ բավարարելով Բյուրոյի հայցային պահանջները/, ինչպես նաև անդրադառնալ դատական ծախսերի բաշխմանը՝ դատական ծախսերի կատարման պարտականությունն ամբողջությամբ դնելով պատասխանողի վրա:

3. Վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2016 թվականի փետրվարի 9-ի վճռով /դատավոր Ա.Ամիրջանյան/ Գազիկ Արթուրի Ավանեայանից և Աիդա Պերճի Մարտիրոսյանից համապարտության կարգով հօգուտ Բյուրոյի վճռվել է բռնագանձել 928.000 ՀՀ դրամ՝ որպես պարտավորության և 18.560 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումարներ /հատոր 1-ին, գ.թ.6/:

2. Սույն քաղաքացիական գործով հայցադիմում ներկայացնելու համար Բյուրոն վճարել է 8.000 ՀՀ դրամ պետական տուրք, այսինքն՝ որպես երկու ոչ գույքային պահանջի համար: Իր հայցադիմումում Բյուրոն միջնորդել է նշանակել դատատեխնիկական և դատաապրանքագիտական փորձաքննություն՝ պարզելու համար, թե տեխնիկապես հնարավոր է արդյոք պատասխանող Ա.Մարտիրոսյանի բաժնի առանձնացումը: Բյուրոն միջնորդել

է նաև պահանջել ապացույցներ՝ բնակելի տան սեփականության իրավունքի գրանցման վկայականի և հատակագծերի պատճենները /հատոր 1-ին, գ.թ.16/:

3. Ըստ «ԼՂՀ դատական փորձաքննությունների լաբորատորիա» ՊՈԱԿ տեղեկանքի՝ շինարարատեխնիկական փորձաքննության արժեքը կազմում է 38.300 ՀՀ դրամ /հատոր 1-ին, գ.թ.123/:

4. Առաջին ատյանի դատարանը վճռել է հայցը բավարարել մասնակի. բնակելի տնից Ա.Մարտիրոսյանի բաժինն առանձնացնելու մասով պահանջը մերժել, բնակելի տունը հրապարակային սակարկություններով վաճառելու մասով՝ բավարարել, Ա.Մարտիրոսյանից հոգուտ Բյուրոյի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար: Փորձաքննություն կատարելու համար դատական ծախսերը բաշխվել են հավասարաչափ՝ Ա.Մարտիրոսյանից և Բյուրոյից հոգուտ «ԼՂՀ դատական փորձաքննությունների լաբորատորիա» ՊՈԱԿ-ի՝ յուրաքանչյուրից բռնագանձվել է 19.150 ՀՀ դրամ:

5. Առաջին ատյանի դատարանի վճիռը պատասխանողները չեն բողոքարկել: Բյուրոն վերաքննության կարգով բողոքարկել է վճիռը՝ հայցի մերժված և դատական ծախսերի բաշխման մասով /հատոր 2-րդ, գ.թ.3-5/:

6. Վերաքննիչ դատարանը Բյուրոյի վերաքննիչ բողոքը մերժել է այն պատճառաբանությամբ, որ դատարանը չի կարող քննության առնել իր ընտրությամբ պահանջներից մեկը, կամ, քննության առնելով երկու պահանջը, վճիռ կայացնել միայն մեկի վերաբերյալ՝ չանելով եզրահանգում մյուս պահանջի բավարարման կամ մերժման վերաբերյալ:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: Գերագույն դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Գերագույն դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ մի քանի պահանջներ պարունակող հայցադիմումի համար պետական տուրք վճարելու, դատական այլ ծախսերի բաշխման վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վճռաբեկ բողոքի հիմքի և հիմնավորումների սահմաններում վերանայելով Վերաքննիչ դատարանի բողոքարկված որոշումը, Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է մերժել և որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Արցախի Հանրապետության Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք, յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ /ԱՀ Սահմանադրության 74-րդ հոդված/:

Բողոքաբերը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը՝ իր 19.09.2018թ. վճռով, որը Վերաքննիչ դատարանի բողոքարկված որոշմամբ թողնվել է օրինական ուժի մեջ, սխալ է բաշխել դատական ծախսերը, համարելով, որ պահանջը բավարարվում է մասնակիորեն, այլ ոչ թե ամբողջությամբ:

Հետևաբար, վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Գերագույն դատարանը պետք է պարզի, թե վճռաբեկ բողոքի փաստարկները հիմնավոր են, թե՛ ոչ, և Վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա՞ է արդյոք բեկանման կամ փոփոխման:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ դատական ակտերի բեկանման և փոփոխման հիմքերը սահմանված են ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 239-րդ, 240-րդ և 241-րդ հոդվածներով, որոնց համաձայն՝ դատական սխալի հիմքով դատական ակտի բեկանման հիմքերն են՝ 1/ նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը, 2/ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը, որոնք ազդել են կամ կարող էին ազդել գործի էլքի վրա, հանգեցրել գործի սխալ լուծման:

Համաձայն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի՝ «1. Նյութական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե դատարանը՝ 1) չի կիրառել այն օրենքը կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը պետք է կիրառեր. 2) կիրառել է այն օրենքը կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը չպետք է կիրառեր. 3) սխալ է մեկնաբանել օրենքը կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը: 2. Նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման»:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածում ամրագրված է. «1. Դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

2. Վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝ 1) դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով. 2) դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ ձևով չի տեղեկացվել նիստի ժամանակի և վայրի մասին. 3) վճիռը ստորագրել է ոչ այն դատավորը, որը կայացրել է այն. 4) վճիռը կայացրել է ոչ այն դատավորը, որը մտնում է գործը քննող դատարանի կազմի մեջ. 5) գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը»:

Արցախի Հանրապետության դատական օրենսգրքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը գործը կամ հարցը /այսուհետ նաև՝ գործ/ քննում և լուծում է Սահմանադրությանը, Արցախի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերին և օրենքին համապատասխան, գործի հանգամանքների անաչառ վերլուծության հիման վրա հիմնված իր ներքին համոզմամբ՝ հաշվի առնելով Արցախի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

Վճռաբեկ բողոքում առաջ քաշված հարցադրմանը պատասխանելու համար Գերագույն դատարանը հարկ է համարում անդրադառնալ «հայցապահանջ և դատական ծախսեր» հասկացություններին:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Քաղաքացիական գործ հարուցելու հիմքը» վերտառությամբ 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ:

Նշված իրավական նորմերից հետևում է, որ քաղաքացիական դատավարությունում հայցվորն ինքն է հայցադիմումը ձևակերպում և ցույց տալիս հայցի առարկան, հայցի հիմքը, հայցի կողմերը: Մինևույն ժամանակ, հայցվորի կողմից իր նյութական և դատավարական իրավունքների տնօրինումը բացարձակ բնույթ չի կրում, այն կարող է իրականացվել միայն օրենքի շրջանակներում՝ դատարանի վերահսկողությամբ:

Ըստ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի /բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի/, որպես կանոն, հայցադիմում ներկայացնելու համար պետք է վճարվի պետական տուրք:

Արցախի Հանրապետության դատարաններում դատական ծախսերի /այդ թվում՝ պետական տուրքի/ չափը սահմանելու, դրա հաշվարկման և գանձման, պետական տուրքի դրույքաչափերի, ինչպես նաև դատական ծախսերի բաշխման, պետական տուրքի վերադարձման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի դրույթներով:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ «դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից»:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Մի քանի ինքնուրույն պահանջներից կազմված հայցագինը որոշվում է բոլոր պահանջների ընդհանուր գումարով»:

Նույն օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 7-րդ կետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, ..., դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

«Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի՝ «Պետական տուրքի հասկացությունը» վերտառությամբ 2-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ նույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և /կամ/ համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է:

«Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածը սահմանում է պետական տուրքի գանձման օբյեկտները: Ի թիվս այլնի, պետական տուրքը գանձվում է դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար: Նույն օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, ...վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար գանձվող ...պետական տուրքի դրույքաչափերը. այն է՝ հայցադիմումների ...համար՝ ա/ գույքային պահանջով հայցագնի 2 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 150 տոկոսից, բ/ ոչ գույքային պահանջով բազային տուրքի քառապատիկի չափով, ...:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ պետական տուրքն օրենքով սահմանված պարտադիր վճար է, և դատարաններում պետական տուրք վճարելու պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում որոշակիորեն փոխհատուցել պետության՝ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերը, նախականիսել ակնհայտ անհիմն հայցադիմումների ներկայացումը:

Մույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ Բյուրոն ներկայացրել է հայցապահանջներ /բաժնային սեփականության ներքո գտնվող անշարժ գույքից բաժինն առանձնացնելու կամ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու/, որոնք, ըստ ԼՂՀ

քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի, կարող են ինքնուրույն հայցերի առարկա հանդիսանալ: Մինևույն ժամանակ, Բյուրոն խնդրել է դատարանին նշանակել փորձաքննություն՝ պատասխանող Ա.Մարտիրոսյանի բաժինն առանձնացնելու տեխնիկական հնարավորությունը պարզելու համար: Առաջին ատյանի դատարանը նշանակել է փորձաքննություն, որի արդյունքները բացառել են Բյուրոյի առաջին պահանջի բավարարումը /բաժինն առանձնացնելը/, և նման պահանջն առանձին ներկայացվելու դեպքում Բյուրոյի հայցը կմերժվեր, հետևաբար Բյուրոն կկրեր դատական ծախսերի հատուցման ամբողջ բեռը: Այնուամենայնիվ, Առաջին ատյանի դատարանը, կատարելով որոշակի աշխատանքներ, ծախսելով միջոցներ /ըստ էության քննելով նշված պահանջը/, եկել է այն համոզման, որ նշված պահանջն անհիմն է, և քննել հայցվորի երկրորդ պահանջը՝ անշարժ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին, ուստի իրավագուրկ է բողոքի փաստարկն այն մասին, որ Բյուրոյի պահանջն ամբողջությամբ բավարարվել է: Գերագույն դատարանը հիմնավոր է համարում Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ «դատարանը չի կարող քննության առնել իր ընտրությամբ պահանջներից մեկը, կամ, քննության առնելով երկու պահանջները, վճիռ կայացնել միայն մեկի վերաբերյալ՝ չանելով եզրահանգում մյուս պահանջի վերաբերյալ»: Մանավանդ որ, ինչպես հետևում է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի բովանդակությունից, օրենսդիրը խստորեն պահանջում է, որպեսզի պահպանվի բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը բաժանելու և դրանից բաժին առանձնացնելու պայմանների հերթականությունը: Այսինքն՝ տվյալ դեպքում խոսքը չի գնում այլընտրանքային պահանջների մասին, քանի որ միայն առաջին պահանջը հիմնավոր չլինելու դեպքում կարող է քննարկման առարկա դառնալ երկրորդ պահանջը:

Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի /ինչպես նաև Առաջին ատյանի դատարանի/ դիրքորոշումը բխում է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի, 123-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներից, համաձայն որոնց՝ հայցադիմումում պետք է նշվեն հայցվորի պահանջները..., դատարանի վճռի եզրափակիչ մասը պետք է պարունակի՝ յուրաքանչյուր պահանջը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու մասին... եզրակացությունը:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ հայցվորի կողմից մեկ վարույթում մի քանի հիմնական պահանջներ ներկայացվելու դեպքում ամեն մի հայցապահանջ պահպանում է իր ինքնուրույնությունը, և դրանցից յուրաքանչյուրը բավարարելու կամ մերժելու մասին դատարանի եզրահանգումը պետք է ձևակերպվի վճռում՝ առանձին:

Գերագույն դատարանը հարկ է համարում փաստել նաև, որ գործող իրավակարգավորման պայմաններում պետական տուրքի գանձում իրականացվում է ոչ թե դատարանի ցանկացած գործողության, այլ այն գործողությունների համար, որոնց արդյունքում վերջնական դատական ակտի կայացմամբ քննարկվում և լուծվում է ներկայացված գույքային կամ ոչ գույքային պահանջը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Գերագույն դատարանն արձանագրում է, որ երկու և ավելի ոչ գույքային պահանջ պարունակող հայցադիմում ներկայացվելու դեպքում պետական տուրքը գանձվում է յուրաքանչյուր պահանջի համար առանձին:

Ինչ վերաբերում է դատարանների կողմից որոշակիության սկզբունքի խախտման մասին վճռաբեկ բողոքի փաստարկին, ապա Գերագույն դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքին կից ներկայացված դատական ակտերում սույն բողոքում բարձրացված իրավական նորմերի վերաբերյալ որևէ մեկնաբանում տրված չէ: Նշված գործերից միայն թիվ

ԸԲԴ/2278/02/16, ԸԲԴ/0742/02/15 և ԸԲԴ/0213/02/17 գործերն են վերաբերում Բյուրոյի հայցերին, որոնցից ԸԲԴ/0213/02/2017 գործով պատասխանողից բռնագանձվել է այն պետական տուրքի չափը, որը վճարել է Բյուրոն՝ հայցադիմում ներկայացնելիս, թիվ ԸԲԴ/2278/02/16 և ԸԲԴ/0742/02/15 գործերով Բյուրոյի հենց առաջին պահանջը /բաժինն առանձնացնելու մասին/ բավարարվել է:

Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ որոշակիության սկզբունքի կիրառության ժամանակ պետք է նկատի ունենալ, որ իրավական նորմերը միշտ որոշակի մեկնաբանությունների կարիք ունեն, և անհնար է իրավական միարժեք նորմերով հստակ կարգավորել կյանքի բոլոր հարաբերությունները: Այդ իսկ պատճառով ԱՀ Սահմանադրությամբ Գերագույն դատարանը՝ որպես երկրի բարձրագույն դատական մարմին, լիազորված է ապահովել օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը /ԱՀ Սահմանադրության 141-րդ հոդվածի 2-րդ մաս/:

Իրավական որոշակիության սկզբունքի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «...անհրաժեշտ է, որ օրենքը լինի բավարար հասանելի ... և որոշակի: ...նորմը չի կարող համարվել «օրենք», քանի դեռ այն ձևակերպված չէ բավարար որոշակիությամբ, որպեսզի քաղաքացուն հնարավորություն տա կարգավորել իր վարքագիծը: Նա պետք է ի վիճակի լինի, անհրաժեշտության դեպքում համապատասխան խորհրդի օգնությամբ, այդ հանգամանքներում ողջամիտ աստիճանի կանխատեսել այն հետևանքները, որոնց նշված գործողությունը կարող է հանգեցնել .../Michaud v. France, 06.12.2012/:

Այսպիսով, Գերագույն դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը՝ ներկայացված վերաքննիչ բողոքի սահմաններում ըստ էության կայացրել է ճիշտ դատական ակտ, հետևաբար անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ վերանայվող դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու Գերագույն դատարանի լիազորությունը և Վերաքննիչ դատարանի 2019 թվականի դեկտեմբերի 18-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

5. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: 2. Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: 3. Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն հոդվածի կանոններին համապատասխան»:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ դատական ծախսերի, այդ թվում նաև՝ պետական տուրքի հատուցման պարտականությունը կրում է այն կողմը, որի դեմ կայացվել է վճիռ:

Գերագույն դատարանը փաստում է, որ դատական ծախսերի բաշխման հարցերին Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները տվել են լուծում, իսկ քանի որ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, ուստի դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ԱՀ վերաքննիչ դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 18-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:
2. Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝	<u>ստորագրություն</u>	Հ.ԱԲՐԱՀԱՍՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝	<u>ստորագրություն</u>	Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Կ.ՂԱՐԱՅԱՆ